

## 16.

ԿԱՐՍԻ ԱՆԿՄԱՆ ԲՈՒՆ ՊԱՏճԱՌԵՐԸ (1920 թ.)

### ԳԵՎՈՐԳ ՅԱԶՃԵԱՆ

Կարսի անկումը 1920 թ. հոկտեմբերի 30-ին՝ մնում է հայոց նորագույն պատմության ամենից խալառակ ու ամոթալի էջերից մեկը<sup>1</sup>: Ուրիշ ի՞նչ որակում կարելի է տալ այն փաստին, որ հօգուտ հայերի՝ բանակի թվակազմի և ուազմամթերքի բազմապատիկ գերազանցության պայմաններում, մի քանի ժամկա ընթացքում<sup>2</sup>, «առանց կովի»<sup>3</sup> թշնամուն է անցել ամրությունների բազմաշարք համակարգ ու-

<sup>1</sup> Լիբանանահայ արձակագիր և Բեյրութի «Նայիրի» շաբաթաթերթի հիմնադիր-խմբագիր Անդրանիկ Ծառուկյանը Կարսի անկումը համարում է «Դեռ Զորեն ետք հայ ժողովուրդին կրած մեծագույն աղետը՝ որուն շուրջ պատմության խոսքը հստակ չէ գեռ, և շատերու մտքին մեջ կմնա առեղծվածային շփոթությամբ»։ տե՛ս նրա խմբագրական ներածական խոսքը Արտաշես Բաբայանի «Կարսի անկումը» հուշագրության վերահրատարակման առթիվ, «Նայիրի» շաբաթաթերթ, Բեյրութ, ԺԵ տարվա (1968-, Գ. 3). 45-50 միացյալ համարների փոխարեն լույս տեսած բացառիկ համար, էջ 8:

<sup>2</sup> Հստ Հայաստանի վրա արշաված թուրքական բանակի հրամանատար Քյազիմ Կարաբերիրի՝ Կարսի ինքը գրավել է 3.5 ժամկա ընթացքում («Քյազիմ Կարաբերիրի հուշերը Հայաստանի Հանրապետության վրա թրավական հարձակումներուն մասին», թարգմ. Ա. Շորվողլյան, «Զարթօնք» օրաթերթ, Բեյրութ, 1966 թ., 10 օգոստոսի, էջ 2):

<sup>3</sup> Կարսի Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ծխատեր քահանա տ. Կորյուն Քոթանցյան. տե՛ս նրա 17 դեկտեմբեր 1922-ի գեկուցագիրը Ամենայն Հայոց Գլորգ Եկաթողիկոսին, «Բանքեր Հայաստանի արխիպելոք» Երևան, թիվ 1 (107), 2006, էջ 100:

նեցող մի բերդաքաղաք՝ իր ավելի քան 700 թնդանոթներով և անհաշվելի այլ ուազմամթերքով<sup>4</sup>, գերի են ընկել տասնյակ հազարավոր հայ քաղաքացիներ, հազարավոր զինվորներ, ավելի քան 120 սպա, որոնց շարքին՝ երեք գեներալ (Արարատյան, Փիրումյան, Ղազարյան) և մեկ նախարար (Բաբելյան): Մինչև Կարսի մարզի ամբողջական հայաթափումը, 1921 թ., թուրքերը քաղաքում կոտորել են 8 հազար, իսկ մարզում՝ 12 հազար հայ՝ հիմնականում տղամարդիկ<sup>5</sup>: Գերի ընկած ոռումին քաղաքացի Վասիլ Խոնեսկուն վկայում է, որ Կարսում նուրի բեյից իմացել է, «որ քաղաքում սպանված են 8 հազար հայեր (կանաքը, երեխաներ և տղամարդիկ), բայց իմ դիտարկումներով սպանվածների թիվը 10-12 հազարից քիչ լինել չէր կարող, քանի որ մի ամիս անց քաղաքի շրջակայքում դեռևս կարելի էր տեսնել բազմաթիվ դիակներ»<sup>6</sup>: Հստ Կարս Սասունու՝

<sup>4</sup> Իր հուշերում Կարաբերիրը հայտնում է. «Կարսի մեջ ահազին քանակությամբ զինամթերք գրավեցինք: Լավ գործածելի վիճակի մեջ 377, նորոգության կարու 339 թնդանոթ և միլիոններով ոռումբ ու փամփուշտ»: «Գյումրիի մեջ ալ մեծ քանակությամբ զինամթերք և գենքեր ձեռք անցուցինք», - ավելացնում է նա: Այս քանակների մի մասը իրեն պահելով հանդերձ, Կարաբերիր արևմտյան ուազմաճակատ՝ Մուստաֆա Քեմալին ուղարկել է 117 թնդանոթ, 12 հազար հրացան, 244 գնդացիր, 14 հազար սվին և սուր, 170 հազար հրետանու ոռումբ, 32 միլիոն փամփուշտ, 110 հազար պայտուցիկ «և մնդուկներով, գեղերով, շողեկառքերով (վագոն վագոն) զինամթերք և մեծագումար դրամ»: Այս բոլորը նկատի ունենալով, Ֆեղի փաշան Թուրքիայի ազգային մեծ ժողովում իր հրճվանքը հայտնելով Կարսի առումի առթիվ, հոփորտում էր. «Հայերն առնված գենքերով անկախության պատերազմը տասը տարի ալ կրնանք շարունակել» («Քյազըմ Կարաբերիրի հուշերը Հայաստանի Հանրապետության վրա թրքական հարձակումներուն մասին», «Զարթօնք», 1966 թ., 10 և 11 օգոստոսի, էջ 2):

<sup>5</sup> Աշոտ Մելքոնյան, «Կարս» և «Կարսի մարզ» հոդվածներ, «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996, էջ 179, 181:

<sup>6</sup> Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 43, թերթ 34 - արտասպեկտ է հետևյալ հրապարակման մեջ. (աշխատասիրեց) Ավետիս Փափազյան, «Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր», «Զարթօնք», 2005 թ., 14 սեպտեմբերի, էջ 2:

2000 հայ զինվոր և սպա գերի է ընկել Կարսում: Նրանցից ընդամենը 600-ն է վերադարձել Հայաստան՝ ութ ամսվա գերությունից և տաժանակիր աշխատանքից հետո: Բայց նույնի՝ թուրքական գերության մեջ ոչնչացվել է նաև Կարսից և Աղեքսանդրապոլից տարված մոտ 8000 հայ երիտասարդ<sup>7</sup>: Մեկ այլ լավատեղյակ անձ՝ հայկական երկաթուղու բարձրաստիճան պաշտոնյա եղիշե Պահլավունին հայտնում է, որ գերի ընկած «հինգ-վեց հազար զինվորներից կենդանի վերադարձան միայն 464-ը: Սպաներից մահացան երեքը: 105-ից մնացին 102 հոգի»<sup>8</sup>: Տ. Կորյուն քահանա Քոթանյանը գերի սպաների թիվը գնահատում է «120-ի շափ», իսկ գերիների ընդհանուր թիվը՝ «3700 հոգի, ըստ ոմանց՝ 7000», որոնցից տասնմեկ ամիս հետո «վերադարձան ոչ ավել, քան 800-900 հոգի»<sup>9</sup>, «միայն 900 հոգի, մեծ մասամբ զինվորականներ»<sup>10</sup>: Մինչդեռ «պատերազմի սկսված օրեն մինչեւ Կարսի անկումը, ապդ ճակատի հայկական բանակի ընդհանուր կորուսար եղած էր մոտ 500 սպանված և 1000 վիրավոր»<sup>11</sup>:

Եվ այսքանից հետո, ընդամենը երեք սպա է ինքնասպանությամբ<sup>12</sup> փորձել քավել համազգային այս մեծ ԱՄՈԹԸ, որին հետևեց Հայաստանի առաջին Հանրապետության լիակատար պարտությունը, Հայրենիքի տարածքի զգալի մասի և թեկուզ կիսատ-պուատ անկախություն ունեցող պետականության կորուսար, հարվածներ, որոնցից հայությունը չի սթափվել մինչև օրս:

<sup>7</sup> Կարս Սասունի, «Հայ-թուրքական պատերազմը», «Հայրենիք» ամսագիր, Բուտոն, յայսուհետ՝ ՀԹՊ, 1926, թ. 7, էջ 76:

<sup>8</sup> Եղիշե Պահլավունի, «Հուշամատլան», Երևան, 2006, էջ 161:

<sup>9</sup> Տես նրա 17 գեկտեմբեր 1922-ի գեկուցագիրը Ամենայն Հայոց Գևորգ Եկաթողիկոսին, «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 1 (107), 2006, էջ 101:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 107:

<sup>11</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 7, էջ 77:

<sup>12</sup> Նրանք են՝ առաջին գնդի հրամանատար գնդապետ Մազմանյանը, Սեպուհի բրիգայի շտաբի պետ հազարապետ Զիլինգարյանը և հրետանու մարտկոցի հրամանատար գլխապետ Բագրատունին: Այս մասին տե՛ս Արտաշես Բաբալյան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 63; ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 7, էջ 76:

Հակառակ Կարսի և, ընդհանրապես, առաջին Հանրապետության անկման մասին մեծածավալ գրականության առկայության, մեր կարծիքով, հայ պատմագիտական ու քաղաքական միտքն այս իրադարձություններին առ այսօր ճշգրիտ գնահատականներ չի տվել: Ուշադրությունն առավելաբար սկզբվել է անկումների քաղաքական, մասնավորաբար արտաքին-դիվանագիտական պատճառների վրա, հետին պլան մղելով ներքին՝ գաղափարական, ուզմական, ուզմահոգեբանական, վարչադրավական և բարոյահոգեբանական պատճառները, որոնք էլ իրականում վճռորոշն էին: Պարտության մի քանի պատճառ նշելով, այն էլ՝ հարցական ձևով, հուշագրողներից Գարեգին արք. Հովսեփյանցը գրում է, որ Կարսի անկման հարցը «մի բարդ խնդիր է, կարուտ անաշառ և մանրազնին ուսումնասիրության»<sup>13</sup>: Իր կարգին, երջանկահիշատակ եկեղեցականի հուշագրության երկրորդ վերահրատարակիչ Անդրանիկ Ծառուկյանը հայտնում է, որ Կարսի անկումը բոլցկիկյան քարոզությամբ պայմանավորելը «կրնա մասսամբ ճիշտ ըլլալ», բայց «անբավարար» է և «անհամոզիչ»: Նա տրամաբանական հարց է տալիս. «Սարգարապատի մեջ կովող հայ զորքը ինչպե՞ս կրնար մեկ օրեն մյուսը դասալիք բազմության մը վերածվիլ, մանավանդ երբ գործ ուներ միևնուշն թշնամիին՝ թուրքին հետ, որուն արյունոտ ծրագիրը հայության հանդեպ գաղտնիք չէր ոչ մեկ հայու: Տարիներու ընթացքին մեր կատարած բոլոր ընթերցումները գոհացուցիչ պատասխան չեն տված այս հարցումին»<sup>14</sup>:

Սույն ուսումնասիրությամբ փորձում ենք պատասխանել հայության գոյատեման համար կենսական այս հարցումին:

<sup>13</sup> Գարեգին արք. Հովսեփյանց, «Կյանքիս ամենագժեախտ օրը և երջանկությանս բոպեն», «Ոգուն շապավինելու արյունքը», Երևան, 2002, էջ 41-42:

<sup>14</sup> Անդրանիկ Ծառուկյան, խմբագրական ներածական խոսք Արտաշես Բաբալյանի «Կարսի անկումը» հուշագրության վերահրատարակման առթիվ, «Նայիրի», Ժետարվա (1968,- Գ. 3). 45-50 միացյալ համարների փոխարեն լույս տեսած բացառիկ համար, էջ 8: Ընդգծումը Ա. Ծառուկյանին է:

Կարսի անկման ու հայության խայտառակ պարտության մասին հիշատակել են բազմիցս, սակայն, ինչպես նժդեհն է նշում, չի ասվել բուն պատճառը, ճշմարտությունը, որն է. այդ օրերին համատարած՝ «հայ ժողովրդի՝ իր ամբողջության մեջ անմարտունակ, անարի, անմշակ հոգին»<sup>15</sup>: Եվ դա լիովին հասկանալի է. ասել ճշմարտությունը՝ նշանակում է ընդունել սեփական սխալը և ապաշխարել դրա համար, իսկ ապաշխարել նշանակում է՝ սխալը գիտակցելուց հետո զղալ և ամաշել, ներողություն խնդրել ու սխալը չկրկնելու կամք դրսեղութել:

Կարսի անկման մասին գրել ենք 2002 թ. Երևանում լուս տեսած՝ մեր կազմած ու խմբագրած «Ոգուն շապավինելու արդյունքը» (Կարսի անկումը 1920 թ. հոկտեմբերի 30-ին – Գարեգին արք. Հովսեփյանցի հուշագրությունը և փաստաթղթեր)» նյութերի ժողովածուում: Դրա լուս տեսնելուց հետո ՀՀ-ում և արտասահմանում հրապարակվել են այս թեմային վերաբերող մի շարք նոր նյութեր և ուսումնասիրություններ: Դրանց մեջ կառանձնացնենք պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արարատ Հակոբյանի՝ ծավալով և տպաքանակով փոքր (28 էջ, 100 տպաքանակով), բայց նշանակությամբ մեծ՝ «1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը» ուսումնասիրությունը (Երևան, 2004): Հեղինակն իր առաջ խնդիր է դրել «ուշագրություն դարձնել այդ պարտության հատկապես բարոյանոգերանական գործոնին, որից մեծապես կախված է նաև ուսպանական հաղթանակը»<sup>16</sup>: Նա Կարսի անկման հիմնական պատճառը է նշում ամբողջությամբ վերցրած հայ հասարակության բարոյանոգերանական անկումային վիճակն ու պարտվողական հոգերանությունը՝ պայմանավորված հասարակական տարբեր արատներով, որոնք համարել էին պետական վարչական

<sup>15</sup> Գարեգին Նժդեհ, «Որդիների պայքարը հայրերի դեմ», Սալոնիկ, 1927: Վերահաստարակվել է Գ. Նժդեհի «Հատընտիր»-ում, Երևան, 2001. մեջբերումը կատարվել է վերշինից, էջ 86:

<sup>16</sup> Արարատ Հակոբյան, «1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը», Երևան, 2004, էջ 4:

մեքենան՝ վերևից մինչև ներքեւ, այդ թվում՝ ներքին գործերի և ուղղմական (գորաց) նախարար, պետության փաստական դիկտատոր Ծովելն Տէր-Մինասյանին<sup>17</sup>, բանակը՝ գեներալներից մինչև շարքային զինվորը, հասարակությունը՝ մտավորական կոչեցյալից մինչև արհեստավորն ու գյուղացին<sup>18</sup>:

Մեր համոզմամբ, Կարսի անկման լավագույն և ճշմարտացի վերլուծական գնահատականը տվել է մեծ ուղղմագետ, քաղաքագետ և ազգային գաղափարախոս Գարեգին Նժդեհը՝ «Որդիների պայքարը հայրերի դեմ» աշխատության մեջ: Նա «մեծ կեղծիք» է հայտարարում Կարսի անկման բուն պատճառը այլ պատճառներով (այլևս երկրորդական հանգամանքներով) փոխարինելու հանցագործ վարքագիծը: «Տարիներ են անցել Կարսի անկման օրեն, տարիներ, և ... այդ բերդի շուրջը տեղի ունեցած ողբերգության մասին հրապարակում կա ամեն ինչ միայն ոչ ճշմարտություն»<sup>19</sup>: Նժդեհը նշում է, որ այս մասին շատ են խոսում, մտավորականից սկսած մինչև սափրիշը, «բայց ոչ ճշմարտությունը

<sup>17</sup> Հայ Գնդունի (բուն անունով՝ Համբարձում Թոփշյան), «Կարսի անկումին պատճառները» [այսուհետև՝ կլ.Պ], «Մարտկոց» թերթ, Փարիզ, 1932 թ., 10 նոյեմբերի, էջ 2: Նոյն տեղում Հայ Գնդունին մեծաստակերով մեշքերում է 1920-ականների երկրորդ կեսին Խուբենի արտաքերած մեկ խոսքը. «Անպատիվ կյանքը նախընտրելի է, քան պատվավոր մահ»:

<sup>18</sup> Կարսի 1919 թ. ապրիլի 12–1920 թ. հոկտեմբերի 30 ժամանակաշրջանի նահանգապետ Ստեփան Ղորգանյանը կարծես նաև այսօրվա համար է գրել հետեւյալ տողերը. «Գաղափարը, սրբությունը և իդեալները կարծես իշել էին իրանց հմայիչ բարձրությունից, ուր մարդիկ ծաղրում էին իրանց ամենանվիրական հավատալիքները և ուր չկար (Ճիշտը՝ «չկային», - Գ. Յ.) այլևս ամոթ, պատկառանք և ազգային այն մեծ կորովը և տրամադրությունը, որ կրթել է սերունդներ և պատմություն ստեղծել...» (ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 18, թ. 79): Նա ավելացնում է. «Այդ մթնոլորտառում չէր (Ճիշտը՝ «չէին», - Գ. Յ.) կարող զարգանալ ու ամրանալ կառավարչական հմայքը ու համարումը, այդ պրեստիժը օրեցօր ընկնում, թուլանում էր և իր հետեւ տանում իրավակարգը, որի փլուզումը ել՝ ակներև էր ել՝ անխոսափելի» (նույնը, գ. 2, թ. 21):

<sup>19</sup> Գ. Նժդեհն, «Հատընտիր», Երևան, 2001, էջ 84–85:

երևան հանելու մտահոգությամբ: ... Եվ ամեն մեկը, որ տգիտություն և վատություն ունեցավ իրենից դուրս փնտրելու աղետի պատճառները՝ կրկնեց հիմարություններ միայն»<sup>20</sup>: Նա գրում է. «Ընդունել ճշմարտությունը հանրապետական բանակի անհաջողությանց մասին, պարզել կարսի անկման իսկական պատճառները – կնշանակի պատասխանատվության բաժին ընդունել»: Նժե՞՞ր հայտարարում է. «Կարսի ամոթը Հ. Հանրապետական կառավարությանը չէ միայն, այլ՝ ողջ հայ ժողովրդի: Զափկում են, բախվում են բանակները, բայց հաղթում կամ պարտվում են ազգերը, ցեղերը»<sup>21</sup>: Կարսի պատերի տակ պարտվողը հայ զինվորն ու զորավարը չէին միայն, այլ՝ բովանդակ հայությունը, հայ ժողովրդի՝ իր ամբողջության մեջ անմարտունակ, անարի, անմշակ հոգին:

Ահա՝ ճշմարտությունը, հայ երիտասարդ...»<sup>22</sup>:

Նժե՞՞ր դատողությանը համահունչ է Կարսի 1919 թ. ապրիլի 12–1920 թ. հոկտեմբերի 30 ժամանակաշրջանի նահանգապետ Ստեփան Ղորղանյանի տեսակետը, թե քաղաքի անկման ու պետականության կործանման համար պատմությունը մեղադրյալների նստարանին տեղ վերապահած կլինի հայ հասարակության համար<sup>23</sup>:

Նույնը հաստատում է նաև Մեծ Բրիտանիայի Անդրկովկասում բարձր կոմիսար, գնդապետ Ստոկսը իր կառավարությանը 1920 թ. դեկտեմբերի 24-ին ուղարկած ծածկագիր զեկուցագրում. «(Հայ՝ Գ. Յ.) ժողովրդի մոտ կովկելու կամքի բացակայությունը բացատրվում է նրանով, որ հենց սկզբից համոզված էին, թե պայքարը իրենց ուժերից վեր է»<sup>24</sup>:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 85:

<sup>21</sup> Նույնը հաստատում է նաև Հայ Գնդունին. «Բանակները իրարու դեմ պատերազմելու ատեն՝ հոգեկան ձիրքե՞րն են որ կշափվին երկու կողմերուն կամ թշնամիներուն միջև, ամեն բանե ավելի» (ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 10 նոյեմբերի, էջ 2):

<sup>22</sup> Գ. Նժեկի, «Հատընտիր», էջ 86:

<sup>23</sup> ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 14, թ. 69:

<sup>24</sup> Armenia – Political and Ethnic Boundaries 1878-1948, compiled by Anita Burdett, “Archive” Editions, London, 1998, pp. 659-660. Փաստաթղթի հայերեն թարգմանությունը տես՝ «Ազուն շապավինելու արդյունքը», Երևան, 2002, էջ 59-60:

Տարօրինակ է, որ հուշագրողների մեծ մասը կարսի անկումը համարում է «չսպասված կրուստ», «անսպասելի», «անակնկալ» (Հայ Գիդունի)<sup>25</sup>; «անակնկալ», «անակնկալ նույնիսկ զինվորական բարձր իշխանության համար» (Դարեգին արք. Հովսեփյանց)<sup>26</sup> և այլն, մինչդեռ, ըստ մեզ, այդ խայտառակ անկումը միանգամայն բնական, տրամաբանական ու օրինաչափ էր, և իսկական անակնկալն այն կլիներ, եթե կարսը թշնամու ձեռքը չանցներ:

Քննարկելով կարսի անկման և դրան հաջորդած՝ ՀՀ կործանման պատճառները, կենտրոնանալու ենք առավելաբար գաղափարական, զուտ ու ազմական, ու ազմա՞ռոգերանական ու բարոյա՞ռոգերանական բնույթի պատճառների վրա, թեև երբեմն անդրադառնալու ենք այլ բնույթի պատճառների ևս, որովհետեւ բոլոր գործոններն օրգանապես միանցուաված են միմյանց: Պատճառների բնույթի մեր դասակարգումը պայմանական է. օրինակ՝ որոշ զուտ ու ազմական սխալներ իրենց խորքում ունեն գաղափարական, ու ազմա՞ռոգերանական և կամ բարոյա՞ռոգերանական նախապատճառ(ներ) և ընդհակառակը:

### Ա. Կարսի անկման և ՀՀ բանակի բայթայման գաղափարական պատճառները

Մեր համոզմամբ, ամենաարոշիչն ու առաջնայինն են գաղափարական և ոգեկան ոլորտներով պայմանավորված պատճառները: Դրանց բացակայությունից կամ թուլությունից են ածանցվում մյուս բոլոր պատճառները:

Ա. 1. Բանակի հրամկազմի ապազգային-հակազգային նկարագիրը և նրա մոտ հայկական պետականության գաղափարի թուլությունը,  
հաճախ է՝ հիմնովին բացակայությունը

ՀՀ բանակի բարձրաստիճան սպայական կազմում (գեներալներ, գնդապետներ և փոխգնդապետներ) զգալի տոկոս էին կազմում ցարա-

<sup>25</sup> Կլ.Պ, «Մարտկոց», 1932թ., 29 հոկտեմբերի, էջ 1:

<sup>26</sup> «Ոգուն շապալինելու արդյունքը», էջ 41:

կան բանակի ոչ հայազգի սպաները (մեծ մասամբ՝ ազգությամբ ոռուս)՝ Զինգելից, երուսալիմսկի, Օլովսկի, Նեստերովսկի, Մեդվեդկ, Կորովկով, Շնեուր, Գրոսս, Բաբաջանով և այլն:

Հայազգի բարձրաստիճան հրամանատարների շախշախիչ մեծամասնությունը նույնպես օտար էր իր իսկ հայրենիքում: Նրանք «ոչ միայն անծանոթ էին հայ լեզվին ու իրականությանը, այլև՝ հայ զորքին»<sup>27</sup>, չունեին հոգեբանական նույնացում իրենց ազգի ու նրա պատմամշակությունին ժառանգության (ներառյալ հազարամյակների ավանդույթներ ունեցող հայկական ուսագմարվեստի) հետ, հետևաբար և չէին կարող ունենալ ազգային արժանապատվության զգացում, ինչպես և ազգի առաջ պատասխանատվության գիտակցություն<sup>28</sup>: Չունենալով հայրենի հողի հետ հոգեբանական խոր նույնացում, նրանց համար այդ հողի պահպանումը կամ կորուստը չէր կարող որպես անձնական պատվի հարց կամ ողբերգություն ընկալվել: Նրանց մոտ հայ ազգի հետ իրենց անձի առնչություններն սահմանափակվում էին իրենց ազգային ծագման մասին հիշողությամբ և ոչ ավելին: Նրանց մոտ չէր նկատվում նույնիսկ «Էթնիկական երկատվածության» երևույթ<sup>29</sup>: Նրանցից գեներալ նազարեցյանն ընդամենը մի քանի բառ գիտեր Թիֆլիսի հայոց բարբառից, իսկ գեներալ Փիրումյանը՝ Արցախի բարբառից: Մյուս հայազգիների մեծագույն մասը մեկ բառ իսկ հայերեն չգիտեր և ճիգ էլ չէր անում սովորելու: Ռուսական դպրոցներում սովորած սպաները հայ էին «անունով միայն, մեծ մասը ցարական ուժինի մարդիկ էին, անտեղյակ՝ մեր կյանքին, անգիտակ՝ մեր լեզվին: Շատերը լավ հայեր էին, բայց ոչ հայրենասերներ»<sup>30</sup>: Մի մասը ... պարզ վարձկան էր, օտար՝ մեր ձգտումներին, մեր ժողովրդի

<sup>27</sup> Վահե Արծրունի (բուն անունով՝ Մելիքսեթ Մուրադյան), «Հայ-տաճկական պատերազմը – Հայ սպազությունը – Շատախ», Երևան, 2002, էջ 62:

<sup>28</sup> Տես Ալբերտ Նալշաջյան, «Էթնիկական հոգեբանություն», Երևան, 2001, էջ 61-62:

<sup>29</sup> Ալիքնըն՝ «նույն անձի մեջ երկու էթնիկական ես-կոնցեպցիաների գոյակցությունը» (նույնը, էջ 460):

<sup>30</sup> Հիմնովին համաձայն չենք այսպիսի գնահատականի հետ. ոչ հայրենասեր, ազգային լեզուն արհամարհող հայազգի արարածը չի կարող հայ կոչվել:

կարիքներին: ... Կառավարությունը շկարողացավ վերակազմել մեր զորքը ապային հիմունքներով»<sup>31</sup>: Բարձրաստիճան «հրամանատարներից շատերը երազում էին ոռւսական զորքի մուտքը Հայաստան և գենիկինյան օրերին բարձրածայն մեր բանակը համարում էին մի զորամաս ոռւսական կամավորական բանակի»<sup>32</sup>: Նրանք «անկախ Հայաստանը համարում էին ժամանակավոր մի երկույթ, որ պիտի չքանար ոռւսական ազգեցության տակ»<sup>33</sup>: Անհնար է առանց արգահատանքի կարդալ Կարսի նահանգապահետ Ստեփան Ղորջանյանի արձանագրած հետևյալ տողերը. «Երհամարհալից և հեգնորեն, այդ գեներալները և գնդապետները ծաղրում էին «հայկական սուվերենիտետը», դրվատում էին ոռւս պետական անցուդարձը, հայ մինիստրներին «խմբապետներ» անվանում և կառավարության պահանջը բանակի ազգայնացման մասին զավեշտ[,] զառնցանք համարելով, այդ առիթով ոռւսերեն էին սրախոսում... Բաժակաճառերը վերջանում էին ոռւսերեն «ուսայով», ուր բոլորի հայացքը դառնում էր գետի հյուսիս»<sup>34</sup>:

<sup>31</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 67-68: Բարձրաստիճան սպայության ապազգային դիմագծի, վարձկանի հոգեբանության և նրա ու շարքային զինվորության միջև խորը անդունդի մասին տե՛ս ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 7, մաս 1, թթ. 84, 159; մաս 2, թթ. 197, 235-236, 252, 255, 284; նույնը, գ. 18, թ. 66; գ. 16, թ. 47:

<sup>32</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 67: Նույնը հաստատում է նաև Բյուրո-կառավարությունում ներքին գործերի և ոպամական նախարար, երկրի փաստական գիլտատոր Խուբեն Տեր-Մինասյանը (Խուբեն, «Հայ հեղափոխականի մը հիշատակները» հ. է, Խու Անջելոս, 1952, էջ 214. մեջբերված է՝ Արարատ Հակոբյան, «1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը», էջ 28): Այս խայտառակ խոստվանությունից հետո կարելի՞ է արդյոք Հայաստանի առաջին հանրապետությունը անկախ պետություն համարել...

<sup>33</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 68: Տե՛ս նաև Անանուն, «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը», էջ 40; ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 7, մաս 3, թ. 403; գ. 18, թ. 60:

<sup>34</sup> ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 7, մաս 3, թ. 400:

Բարձրաստիճան հրամանատարությունը մի աշխարհ էր, իսկ զինվորությունը՝ ամբողջովին մեկ այլ աշխարհ, «Հայկական քաղաքական միտքը և զինվորական դասը անջատ էություններ էին...»<sup>35</sup>: Հայրենասիրական ցիդ, լրջություն, բանիմացություն և ռազմական պատվախնդրություն ինչոր չափով ունեցել են միայն գեներալ Սիլիկյանը (թեև նա էլ հայերեն չգիտեր<sup>36</sup>) և Հայոց բանակի առաջին գնդի երբեմնի հրամանատար գնդապետ Հարությունյանը: Այդուհանդերձ, Սիլիկյանը «Ճակատագրական այս պատերազմում... իրեն լավ կողմերով չդրսելորեց»<sup>37</sup>:

Զինհրամանատարների ապագային-հակագգային և հակապետական նկարագիրը դրսելորվել է նույնիսկ թուրքական գերության մեջ: Ըստ Արտ. Բաբալյանի վկայության, «Կարսում գերության մեջ գտնվող ոռուսահայ սպաների մեծ մասն ուրախ էր, որ Հայստանում խորհրդային իշխանություն էր հաստատվել» և «միայն երեք-չորս հոգով էինք հոգով-սրտով տանջվում մեր երկրի կորուստով: Մյուսները դեն նետեցին ուսագիրները և սկսեցին օգտագործել «ընկեր» բառը»<sup>38</sup>:

Բոլոր հուշագրողները շեշտում են այն միտքը, որ ՀՀ-ն թեև ունեցավ զինվորություն և զինվորական հրամանատարություն, բայց չկր-

<sup>35</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 11, էջ 110: Թատր և օտարացած հայագիր բարձրաստիճան հրամանատարների մեջ պետությանը իր նվիրվածությամբ առանձնացել է ... ոռւս նեստերովսկին. նա «տարօրինակորեն կապված էր Հայստանին», որն ընդունել էր «որպես իր նոր ու հարազատ հայրենիքը»: Ասովներ էլ կային, որ քաջ համարվող չորրորդ գնդի «իսկական փառքն ինք՝ փոխգնդապետ նեստերովսկին էր» (Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 60):

<sup>36</sup> ՀԱԱ, գ. 477, գ. 1, գ. 7, մաս 3, թթ. 362, 393: Արժե նշել, որ Սիլիկյանն ազգությամբ (հայացած) ուղի էր:

<sup>37</sup> Արարատ Հակոբյան, «1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը», էջ 19:

<sup>38</sup> Կարին Սարգսյան, «Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ.», Երևան, 2002, էջ 176:

ցավ ստեղծել ազգային բանակ<sup>39</sup>: Ուստի, «նա, բնականաբար պետք է պարտվեր»<sup>40</sup>:

**Ա. 2. Բանակում տիրող լեզվական վիճակը և  
օտարամոլության երևույթները**

Ազգային լեզուն և ազգային ինքնազիտակցությունն անխպելիորեն փոխապակցված երևույթներ են<sup>41</sup>: Իսկ ինչպիսի՞ն էր վիճակը ՀՀ բանակում: Հրամանատարները հայ զինվորների հետ խոսում էին... թարգմանչի միջոցով: Ուշագրավ է այն փաստը, որ Կարսի անկումից մի քանի օր առաջ ժամանելով բերդաքաղաք, գերազույն հրամանատար նազարբեցյանը ցանկացել է դիմել զորքին՝ հայերենով, բայց հազիվ կարողացել է արտասանել «Կեցցե՛ Հայաստան», այն էլ՝ «մեր ականջին օտար և խորի առողջանությամբ»<sup>42</sup>:

Մեր համոզումով, հայոց լեզվի նկատմամբ անարդ մոտեցումը էական դեր է կատարել Կարսի անկման և առհասարակ հայկական առաջին հանրապետության ծանր և անփառունակ պարտության ու վերացման հարցում:

Այդուհանդերձ, ՀՀ ղեկավարությունը համապատասխան լուրջ միջոցների շրիմեց՝ այս իրողությունը հիմնովին փոխելու ուղղությամբ: Ա-

<sup>39</sup> Այս մասին տես, օրինակ, ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 11, էջ 108; Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 57:

<sup>40</sup> ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 9, թթ. 1-2: Ոգով, հոգեբանությամբ և քաղաքական իդեալներով ազգային բանակի չգոյությունը հաստատելով հանդերձ, պատմաբան Ա. Հակոբյանը ավելի մեղմ է արտահայտվում, հապտնելով, թե «նման բանակից հազիվ թե հնարավոր էր շոշափելի հաջողություններ ակնկալել» (Արարատ Հակոբյան, «1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը», էջ 28):

<sup>41</sup> Ալբերտ Նալշաշյան, «Էթնիկական հոգեբանություն», էջ 61-62:

<sup>42</sup> ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 7, մաս 3, թթ. 371-373: Հետաքրքրական է, որ ՀՀ բանակի անհաջողությունների շարանի օրերում, նազարբեցյանը «թողել էր ոռու պաշտոնազեստը և պճնվել էր հայկական զինվորական տարազով: ... Այդ օրերում նա հագնում էր իր փառավոր անցյալի պատվալից գլխավոր շքանշանները» (ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 9, թ. 3):

վելին, նրա ձեռք առած մի քանի միջոցառումները ոչ միայն չգործադրվեցին, այլև, դրանով իսկ, էլ ավելի վարկաբեկեցին պետականության գաղափարը։ Այդ միջոցառումներից էր ՀՀ կառավարության՝ 1920 թ. մայիսի 30-ին հաստատած «Պետական լեզուն շիմացող պաշտոնյանների լիկվիդացիայի մասին» օրենքը, որը այդպես էլ մնաց թղթի վրա<sup>43</sup>։

Օտարազգի և հայանուն, բայց ազգուրաց գեներալներին ու գնդապետներին հովանավորում էր զորաց նախարար Խովեն Տեր-Մինասյանը<sup>44</sup>։

Ինչպես վերևում նշեցինք, բարձրաստիճան զինվորականներն աշքի չէին ընկնում նաև անկախ պետականության նկատմամբ նվազագույն հարգանքով, իրենց ավելի վատ դրսեորելով, քան վարձկանները։ Բավարարվենք մի քանի՝ առավել արտառոց օրինակներով<sup>45</sup>։

Գնդապետ Նիկոլայ Ղորդանյանը «մեկ բառ հայերեն չէր գիտեր», իսկ Սմբատը և զինվորները, որոնց անմիջական հրամանատարն էր նա մինչև փոխարինվելը Սեպուհով, «բացի հայերենն ուրիշ որևէ լեզու չէին գիտեր»<sup>46</sup>։

ՀՀ առաջին ռազմական նախարար (1918 թ. հունիս – 1919 թ. մարտ) և բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Հովհաննես Համիզերդյանը «սրտով փարած չէր Հայաստանի դատին»<sup>47</sup>, «նա չէր հավատում հայկական իշխանությանը, հայոց հանրապետությունը նա պարապ ժա-

<sup>43</sup> Այս օրենքը հայտարարելով «ժամանակավրեալ», պատմաբան Վանիկ Բաբաջանյանը դա համարում է «ավելի շատ արդյունք Բյուրո-կառավարության ոչ ոռւսական հակումների»։ տե՛ս Վանիկ Բաբաջանյան, «Միջկուսակցական հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում բոլշևիկների հակապետական ելույթների և դրանց հետևանքների հաղթահարման շրջանում (1920 թ. մայիս-օգոստոս),» Երևան, 2006, էջ 15։ Մեր համոզմամբ, երկու տարի առաջ անկախություն հռչակած որևէ պետության մեջ նման օրենքի բնունումը ոչ միայն չի կարող «ժամանակավրեալ» լինել, այլ՝ պատմական անհրաժեշտություն է։

<sup>44</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 341։

<sup>45</sup> Այդ օրինակները այնքան շատ են, որ կարելի է դրանցով ... հատորներ կազմել։

<sup>46</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 4, էջ 83։

<sup>47</sup> Վահե Արծրունի, նշանական պատմություններ, էջ 382։

մանակի գրադմունք էր համարում»<sup>48</sup>: Մի առիթով, Կովկասյան ուազմաճակատի հրամանատարներից Զեւնոզուբովը նրա մասին ասել էր, թե «այս հիանալի մարդու ամենամեծ առաքինությունն իր հայ շինելն է»<sup>49</sup>:

Նույն «առավելությունն» ուներ ՀՀ բանակի գլխավոր հրամանատարը՝ գեներալ Թովմաս Նազարբեզյանը: Հայկական կորպուսում, այնուհետև ՀՀ բանակում նրա կողքին ծառայած, ցարական բանակի սպա, ծագումով էլզասլոթարինգիացի գնդապետ Ալեքսանդր Շնեուրը, նրա մասին ասում է. «Ծագումով նա հայ էր, սակայն իրեն ոռւս էր համարում և հայերեն չէր խոսում»<sup>50</sup>: Ահա թե ինչպիսի ազգային ու պետական մտածողության տեր է եղել անկախ Հայաստանի Հանրապետության առաջին գինվորական դեմքը՝ «սպարապետը», ում վստահվել էր հայոց հայրենիքի պաշտպանության հույժ պատասխանատու գործը...

Չափազանց բնութագրական է հետևյալ դեպքը. 1919 թ. ամառը ՀՀ խորհրդարանի շենքի մի սենյակից լսվում է ոռւսերեն մի երգ: Խորհրդարանի փոխնախագահը և ուրիշներ շտապում են այնտեղ ստուգելու, թե ի՞նչ է կատարվում: Պարզվում է, որ ՀՀ բանակի բարձրաստիճան սպաները երգում էին ցարական Ռուսաստանի «Բոժե, ցարյա խրանի» հիմներգը՝ ՀՀ գեկավարությունից առաջ իմացած լինելով. որ իրենց կուռքը՝ այդ օրը երևան հասնող գնդապետ Զինգելիցը նշանակվել է Դենիկինի դիվանագիտական ներկայացուցիչ ՀՀ-ում... «Ի զուր Տիգրանյանը»<sup>51</sup> սաստեց և խորհրդարանի անունով սպառնաց հայ սպաներուն: Ընդհակառակն, քանի ան ավելի լուրջ բնույթ տված իր սպառնալիքին, սպաներն ավելի ոգևորված երգեցին ցարական պաշտոնական երգը» և «ի-

<sup>48</sup> ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 7, մաս 3, թ. 406:

<sup>49</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 382: Գեներալ Հայովերդյանի ապազգայնության մասին հավելյալ տե՛ս ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 12, թ. 80:

<sup>50</sup> Անդրե Ամուրյան, «Գնդապետ Ալեքսանդր Շնեուրի հուշերը», Ֆրեզնո, 1967, էջ 39: Մեր կարծիքով, էլ ավելի դատապարտելի է, որ չէր էլ ուզում սովորել, նույնիսկ ավելի քան 2 տարի ծառայելով մի պետության բանակում, որի պետական միակ լեզուն հայերենն էր:

<sup>51</sup> Սիրական Տիգրանյան՝ այդ օրերին ՀՀ խորհրդարանի փոխնախագահ:

րենց տուները ցրվեցան անարգել»<sup>52</sup>: Իհարկե, այդ «ազգուրաց հայ սպաներ»-ից<sup>53</sup> ոչ ոք պատասխանատվության շկանչվեց:

Ստրկամտությունն ու ստորաքարշությունը հասել էր այնպիսի ահ-ռելի չափերի, որ «անգամ մեր հասարակական մեծարժեք դեմքերեն մեկը»<sup>54</sup> ուրիշներու ներկայության կրկնել էր. «Երանի թե Խուսաստանը 1914-ի սահմանների վրա լիներ, թող ես էլ նրա բանտումը լինեի»<sup>55</sup>:

Ազգային-պետական մտածողությունը թույլ էր նաև քաղաքացիական ծառայողների մեծ մասի մոտ: Արտառոց է այն փաստը, որ պետության առաջին դեմքը՝ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը, 1919 թ. աշնանը ՀՀ հյուսիս-արևելյան շրջաններ իր կատարած այցի ընթացքում Արդարանում այցելում է մոտակա վրացական գորամասը<sup>56</sup> և այնտեղ ելույթ ունենում ... վրացերենով՝ խոսելով հայ-վրացական բարեկամության մասին և «կեցցե» գոռալով ի պատիվ վրաց հանրապետության<sup>57</sup>:

### Ա. 3. Հույսը օտարների վրա դնելը

Մինչ Թուրքիան իր հույսը հիմնականում դրել էր իր սեփական ուժերի վրա, ՀՀ ղեկավարությունը, դաշնակիցներին վստահելով, թերագնահատում էր իր սեփական ուազմուժի կատարելիք գործը և հույսը դրել էր դիվանագիտության վրա<sup>58</sup>: Հայության, մասնավորաբար ՀՀ քա-

<sup>52</sup> Վահին Արծրունի, նշվ. աշխ., էջ 370-371: Յարական հիմները ՀՀ բանակի բարձրաստիճան հրամանատարների ամենասահրած երգերից լինելը և նրանց մոտ «շատ բարձր տրամադրություն» ստեղծելը հաստատում է նաև Ստ. Ղորդանյանը (ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 7, մաս 3, թթ. 399, 401-402):

<sup>53</sup> Վահին Արծրունի, նշվ. աշխ., էջ 371:

<sup>54</sup> Հուշագրողը շի տալիս նրա անունը:

<sup>55</sup> Վահին Արծրունի, նշվ. աշխ., էջ 102:

<sup>56</sup> Ալեքսանդր Խատիսյան, «Հայաստանի Հանրապետության ծագումն ու գարգացումը», «Հայրենիք», 1925, թիվ 6, էջ 52:

<sup>57</sup> ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 7, մաս 2, թ. 207: Հիշեցնենք, որ այդ խոսքերն ասվում էին, երբ մեկ տարի էլ չէր անցել հայ-վրացական պատերազմից:

<sup>58</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 4, էջ 62:

դաքական ու զինվորական ղեկավարության մեծ մասն իր փրկությունն իրենից դուրս էր տեսնում<sup>59</sup>: Նրանց մի մասը սպասում էր դաշնակիցների քաղաքական ու ռազմական օգնությանը, իսկ մյուս մասն էլ արդեն էն գլխից երազում էր ռուսական իշխանության վերադարձը:

Թուրքական հարձակումն սկսվելուց 20 օր հետո իսկ, ՀՀ կառավարությունն իր հույսը դնում էր ոչ թե սեփական ուժերի, այլ՝ դաշնակիցների վրա: Խաղաղության խորհրդաժողովին ՀՀ պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանը ՀՀ անունից 1920 թ. հոկտեմբերի 6-ին հուշագիր է ներկայացնում դաշնակից ուժերի գերազում հրամանատար մարշալ Ֆերդինանդ Ֆոշին, ուր ասվում է, թե «ՀՀ կառավարությունը գտնում է, որ թուրք-բոլշևիկյան պլանը ոչչացնելու ամենից ազդումիջոցը դաշնակիցների կողմից Տրապիզոնի գրավումն է»<sup>60</sup>: ՀՀ կառավարությունը, որպես օժանդակ միջոց, ցանկություն էր հայտնում հունական զորքի առաջխաղացումն արևմտյան ռազմաճակատում<sup>61</sup>: Ֆոշի անունից ՀՀ դիմումին պատասխանում է դաշնակից միացյալ զորքերի շտաբի պետ, գեներալ Մաքսիմ Վեյգանը՝ իր պատասխանը հղելով

<sup>59</sup> Հայ ժողովրդին հույսը միայն սեփական ուժերի վրա դնելու հորդոր-մարտակոչ է Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի կոնդակը: Հայոց հայրապետը հայտարարում էր, թե «մենք պետք է պաշտպանենք մեր մայրենիքը [այսպես է բնագրում՝ Գ. Յ.], օտարը մեզ չօգնեց և յի՞ օգնելու»: Գևորգ Ե-ի կող տե՛ս «Եղիմիածին» շաբաթաթերթ, Վաղարշապատ, թիվ 12, 1920 թ., 4 հոկտեմբերի, էջ 177-179:

<sup>60</sup> Armenia – Political and Ethnic Boundaries 1878-1948, p. 767.

<sup>61</sup> Նույն տեղում: Հմմտ. ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 602, թ. 400 (փաստաթղթի լրիվ շարադրանքը՝ տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (Քաղաքական պատմություն) - փաստաթղթերի և նյութերի ժողովածու», փաստաթուղթ թ. 242, էջ 290): Մինչ Ավետիս Ահարոնյանը կներկայացներ հիշյալ դիմումը, ՀՅԴ «Յառաջ» օրաթերթ-պաշտոնաթերթի նախորդ օրվա՝ հոկտեմբերի 5-ի համարում լույս էր տեսել Փարիզից նոր վերադարձած Ալ. Խատիսյանի հարցագրուցը, որտեղ նա հստակորեն ասում է. «Զինվոր անոնք (դաշնակիցները՝ Գ. Յ.) մեզի շի տրամադրեցին, և բացեիրաց հայտնեցին, թե Հայաստան պետք է իր հույսը դնե իր բանակին վրա» («Յառաջ», Երևան, 1920 թ., 5 հոկտեմբերի, էջ 1. հաստագրումը մերն է՝ Գ. Յ.):

խորհրդաժողովի նախագահին: Նա հայտնում է, որ Հայկական ցանկությունը «որքանով էլ սկզբունքով արդարանալի է», սակայն նրա բավարարումը «պահանջում է այնպիսի ուժեր, որոնք Անտանտի արդի հնարավորություններից վեր են»<sup>62:</sup> Այսքանից հետո էլ ՀՀ ղեկավարությունը համառորեն շարունակում էր նույն հանկերգը երգել: ՀՀ արտաքին գործերի նախարարությունը Վրաստանում ՀՀ լիազոր ներկայացուցչին հոկտեմբերի 29-ին հղած հեռագրով հրահանգում էր նրան. «Խնդրեցե՞ք դաշնակիցներից շտապ և ռեալ օգնություն՝ դեսանտ Տրավիկոնից՝<sup>63</sup> շրջանում, ուսպամթերքի մատակարարում և այլն»<sup>64:</sup> Հայ դիվանագետը, ստանալով Կարսի անկման մասին հեռագիրը, տեսնվում է Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի բարձր կոմիսար Ստոկսի հետ և նորից բարձրացնում դաշնակիցների օժանդակության հարցը: Բրիտանացի զինվորականը անկեղծորեն խոստովանում է, որ «ըստ երևույթին, Անտանտը կա'մ չի կարող, կա'մ չի ցանկանում օգնել»<sup>65:</sup> Ստոկսը նախապես

<sup>62</sup> Armenia – Political and Ethnic Boundaries 1878-1948, p. 769.

<sup>63</sup> Բնագրում՝ «Տրավանի», որը սխալի կամ շփոթի հետևանք է:

<sup>64</sup> Փաստաթուղթը՝ ՀԱԱ, ֆ. 276, գ. 1, գ. 19, թթ. 34-36: Արտատպվում է «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (Քաղաքական պատմություն)» - փաստաթղթերի և նյութերի ժողովածությոց», փաստաթուղթ թ. 276, էջ 322: Մինչև դաշնակիցներին դիմելը և նախքան հայ-թուրքական պատերազմի բռնկումը, ՀՀ կառավարությունը Տրավիկոնում դեսանտ իջեցնելու հարցով շոշափել է նաև Հարավային Ռուսաստանում կամավորական բանակի հրամանատար Վրանգելի տրամադրությունը (ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 602, թ. 400, փաստաթղթի լրիվ շարադրանքը՝ տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (Քաղաքական պատմություն)» - փաստաթղթերի և նյութերի ժողովածությունը), փաստաթուղթ թ. 242, էջ 290): Ի դեպ, 1920 թ. հունիսին ՀՀ բանակի Օլթի մուտքը վերջնական նպատակ ուներ այդ դուրս գալ Տրավիկոնի շրջանում և ԱԱ ծովի վրա հայոց ի նպաստ ելքի դրույթը ամրագրել տալ Օսմանյան կայսրության հետ շուտով ստորագրվելիք Խաղաղության դաշնագրում:

<sup>65</sup> Փաստաթուղթը՝ ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 602, թ. 72: Հրապարակվել է «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում, 1971, փաստաթուղթ թ. 7, էջ 37: Խուսերեն բնա-

Էլ՝ Կարսի ուղղությամբ թուրքական հարձակման օրերին Երևան և Կարս իր այցելության ժամանակ, հատակորեն ասել էր, թե «ոչ մի օգնության հովանական գույք գաշնակիցների վրա»<sup>66</sup>: Այդուհանդերձ, Եվրոպայի վրա հովանական այնքան մեծ էր, «որ Կարսում՝ պարտվելը կամ հաղթելը չէր համարվում ճակատագրական Հայկական հարցի համար»<sup>67</sup>:

Մինչդեռ իրողությունն այն էր, որ պատմական այդ ժամանակաշրջանում «հայության մեծ մասի աշքերը հառած էին դեպի հյուսիս. փրկությունը միւսաստանից էր սպասվում»<sup>68</sup>:

### Բ. Կարսի անկման ռազմական պատճառները

Կարո Սասունին կատարում է հետևյալ հիանալի համեմատությունը. «Բանակը կնմանի լարված մեքենայի մը, որու կանոնավոր շարժման ի տես մարդ կհիանա և ակնապիշ կդիտե: Բայց երբ մեկ պատուակը այդ հսկա մեքենային ձախողի ու գուրս գա, մեքենան կանգ կառնե, կամ անոր մասերը իրար սեղմելով՝ կզախչախվին»<sup>69</sup>: Համարյա նույնը գրում է նաև Ստ. Ղորդանյանը. «Կառավարությունը պետական կորս (ընդգծումը հեղինակինն է՝ Գ. Յ.) շուներ, ... ուր բարդ մեքենայի բոլոր մասնիկները մեկը մյուսին լրացնելով, և մեկը առանց մյուսի ոչինչ կարող են միայն ստեղծել կառավարչա-

գիրը տես՝ «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (Քաղաքական պատմություն) - փաստաթղթերի և նյութերի ժողովածու», փաստաթուղթ թ. 281, էջ 327:

<sup>66</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 67:

<sup>67</sup> Հայկ Ասատրյան, «Վերանորոգչական խորհրդածություններ», «Խազմիկ» կիսաշշաբաթերթ, Սոֆիա, թիվ 113-120, 1938-1939: Արտատպվել է հետևյալ գրքույկում՝ Հայկ Ասատրյան, «Վերանորոգչական շարժում (խորհրդածությունների)», «Ազգայնական ակումբի» հրատարակություն, Երևան, 2002, էջ 13: Զուգահեռ տանելով այսօրվա ՀՀ-ի հետ, նկատենք, որ ՀՀ բարձրաստիճան պաշտոնատարները հաճախ հայտարարում են, որ Հայոց արևելից կողմանց ազատագրված տարածքների հանձնումն Արքեջանին չի կարող ճակատագրական լինել բուն ՀՀ-ի համար...

<sup>68</sup> Սիմոն Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 521:

<sup>69</sup> ՀթՊ, «Հայրենիք», 1926, թ. 6, էջ 85:

կան ապարատի ներդաշնակ ընթացքը»<sup>70</sup>: Պետական վարչամեքենայի բնականոն և արդյունավետ աշխատանքի համար կարևոր են ոչ միայն բանակի ռազմական, այլև նրա ու հասարակության բարոյահոգեբանական հատկանիշների բարձր մակարդակների առկայությունը:

Իսկ ինչպիսի՞ն էին այդ որակները Հայաստանի առաջին հանրապետությունում ընդհանրապես և բանակում մասնավորապես: Դրանք քննարկելու ենք հաջորդ էջերում:

### Բ. 1. Չուտ ռազմական պատճառներ և սխալներ

#### Բ. 1. 1. Ռազմական անպատճաստությունը

Պատերազմին անպատճաստ լինելու փաստը հաստատում են շատ հուշագրողներ, որոնց շարքում՝ Միմոն Վրացյանն<sup>71</sup> ու Կարո Սասունին<sup>72</sup>: ՀՀ ղեկավարությունը կարծում էր, որ բանակը զենք-զինամթերքով, սննդով, հանդերձանքով, վառելանյութով և փողով ապահովելը մարտունակ բանակ ունենալ է նշանակում, հիմնովին անտեսելով բարոյահոգեբանական գործոնը, որը Հայկական բանակում բավականին ցածր մակարդակում էր: 1918 թ. մայիսին հերոսական դիմադրությամբ թուրքերին Ախուրյանի ձախ ափը թափած հայկական բանակն ու ընդհանուր վերցրած՝ ՀՀ հասարակությունն ապրում էին պարտվողական հոգեբանությամբ: Պետական բյուջեի ծախսային մասի շուրջ 85

<sup>70</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 18, թ. 10:

<sup>71</sup> Բատ Ա. Վրացյանի «Հայաստանը «բոլորովին պատրաստ չէր այդ պատերազմին» (Միմոն Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 504. հաստապրումը մերն է,- Գ. Յ.):

<sup>72</sup> Բատ Կ. Սասունու՝ «Հայաստանի կառավարությունը ... անպատճաստ էր թուրքերու կողմե բացված պատերազմի մը: ... Ոչ ոք մտքեն կանցըներ, թե քաղաքականապես ճգնված Տաճկաստանը Հայաստանի ղեմ պատերազմական գործողություններու նախաձեռնությունը իր վրա պիտի վերցներ» (ՀԹՊ, «Հայրենիք» 1926, թ. 5, էջ 75):

տոկոսը հատկացվում էր բանակի կարիքներին<sup>73</sup>: «Սպաներն ու զինվորական պաշտոնյաները ստանում էին լավագույն վարձատրությունը: ... Կառավարությունն աշխատում էր ըստ ամենայնի բավարարել զորքի պահանջները, և այնուհետև միայն մտածել ժողովրդի այլ կարիքների մասին»<sup>74</sup>: Բայց զինվորները մնում էին մերկ, քաղցած և անխնամ<sup>75</sup>:

Պատերազմին անպատրաստ լինելու տիսուր փաստը վերաբերում էր կյանքի առհասարակ բոլոր ոլորտներին (տնտեսական, քաղաքական, դիվանագիտական և այլն), մասնավորաբար, բանակի ու հասարակության՝ պատերազմին հոգեբանական նախապատրաստությանը: ՀՀ պարբերական մամուլը հեղեղված էր թուրքերի ու նրանց արևելյան ցեղակիցների հետ բարիբացիության և նույնիսկ բարեկամության մասին հրապարակումներով՝ բթացնելով թշնամու ճանաշման ժողովրդական զանգվածների և զինվորների ընկալումը:

#### Բ. 1. 2. Ռազմական պլանի և բարտեզների շգոյությունը

Հուշագրողների մեծ մասի վկայությամբ, չկար ուազմական ընդհանուր հատակագիծ-պլան, որով առաջնորդվեր հայկական բանակը հարձակողական թե պաշտպանողական մարտեր մղելիս: Բացակայում էր ներդաշնակությունը զորքի տարրեր միավորների գործողությունների միջև:

Անփոփոխություն է դրամերվել նաև ուազմական քարտեզների հարցում: Դրանք պետք է պարբերաբար փոփոխվեին՝ արտահպտելով վերջին պահի ուազմական իրադրությունը: Մինչդեռ ոչ միայն այդպիսի օպերատիվություն չի եղել այլև կամ ուազմական քարտեզներ չեն եղել նույնիսկ Կարսի ամրությունների գորահրամանատար Փիրումյանի շտաբում, կամ էլ դրանցից հասկացող սպաներ: Այդպիսի երկու օրինակ բերում է Ստ. Ղորղանյանը: Խմբապետներից Փիլոսը Փիրումյանի շտաբ բերում է տեղեկություններ ճակատից,

<sup>73</sup> Արտաշես Բաբալյան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 67; ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 7, մաս 2, թթ. 194, 253; նույնը, գ. 18, թ. 39:

<sup>74</sup> Արտաշես Բաբալյան. «Կարսի անկումը», էջ 67:

<sup>75</sup> ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 18, թ. 39:

«բայց ավելի քան կես ժամ պետք էր քարտեղ գտնելու համար»<sup>76</sup>: Խազմական պլանի և կապի բացակայության պատճառով, գնդապետ Իշխանյանի հրամանատարած 7-րդ գունդը Կարսի անկման օրը գտնվում էր Կարսից արևելք, մի քանի կիոմետր հեռավորության վրա և չէր իմանում ի՞նչ անել՝ մինչդեռ նրան ուազմական ակտիվ գործողություններին ընդգրկելը կարող էր բեկումնային լինել:

Փիրումյանի շտաբը «փայլել է» անփութության այլ փաստերով: Ծաղրելով նրան և շտաբ բառը շակերտավորելով, նահանգապետ Ղորդանյանը գրում է, որ դա «նման էր ավելի մի անկյալանոցի և ոչ երբեք ինքնակալ հրամանատարական կայանի»<sup>77</sup>:

Այդուհանդերձ, Ղորդանյանը, հակասելով ինքն իրեն, վկայում է, թե եղել է ուազմական պլան, որը «կազմված էր շատ իմաստալից և մեծ ուազմական արժեք ուներ»: Դա նախատեսում էր, որ Դրոյի և գնդապետ Հասան-Փաշայանի զորամասերը, ուազմաճակատի համապատասխանաբար ձախ (Արաքսի հովիտ) ու աջ (Ախուրյան) կողմերից պետք է շրջապատեն թուրքական զորքը թիկունքից: «Եվ եթե հայ սպայությունը համակված լիներ իր պարտավորությունների սրբությամբ, Կարաքեքիր իր ամբողջ բանակով մեր պատվավոր գերին կլիներ»<sup>78</sup>: Սակայն, այս պլանը հիմնովին ձախողվում է փոխգնդապետ Ղոնդախշանի ապիկարության պատճառով (տեսնել ներքեւում):

Մյուս կողմից, «թյուրքաց հրամանատարը երկու բան շատ է սիրում քարտեղ և հեռադիտակ... Քարտեղի առաջ նա նստում է ժամերով, ուսումնասիրում և իր ուազմական դասավորումները անում, իսկ արշավի ժամանակ նա ձեռքից վայր չէ թողնում հեռադիտակը...»: Հուշագրողն անմիջապես ավելացնում է՝ ծաղրական ոճով. «Ճիշտ այնպես, ինչպես որ մեր Կարսի գեներալները...»<sup>80</sup>:

<sup>76</sup> ՀԱԱ, գ. 477, ց. 1, գ. 12, թ. 16:

<sup>77</sup> Նույն տեղում, գ. 11, թթ. 4-7:

<sup>78</sup> Նույն տեղում, գ. 14, թթ. 21-22:

<sup>79</sup> Նույն տեղում, գ. 8, թթ. 1-2:

<sup>80</sup> Նույն տեղում, գ. 17, թ. 19:

Բ. 1. 3. Ռազմական ուժերի կենտրոնացման և խելամիտ (ռացիոնալ) օգտագործման սկզբունքի բացակայությունը կամ արհամարհումը

Հասկանալի է, որ թափար-բոլշևիկան հարձակումների ու ներսի մուսուլման զանգվածի խռովությունների պատճառով, բանակի մի զգալի մասը ստիպված էր գտնվել Կարսի ճակատից հեռու, մինչդեռ Կարսիքիր ՀՀ բանակի դեմ հանել էր Արևմտյան Հայաստանի գրավյալ տարածքում գտնվող թուրքական բոլոր զորքերն՝ ընդամենը մեկ վաշտ թողնելով Կարինում: Սակայն, ՀՀ զորքերի մնացյալ հնարավորություններն էլ չգործածվեցին խելամիտ ձևով: Դրա լավագույն օրինակը Սեպուհի բրիգադայի հետ կատարվածն է: Գեներալներն ու գնդապետները, թշնամանքի հասնող ատելություն ունենալով Սեպուհի նկատմամբ, բաժան-բաժան էին թողել նրա հրամանատարած բրիգադան: Վերջինիս մեջ մտնող 7-րդ գունդը գտնվում էր Իգդիր-Սուլրմալովի ճակատում, 8-րդը՝ Կարսի ճակատում (ընդ որում, վերջինիս գումարտակներն էլ տարբեր դիրքերում էին տեղակայված), բրիգադայի մեջ մտնող Սմբատի կամավորական խմբերը՝ Արդահանի շրջանում. նրանք իրարից լուր չունեին և տարբեր հրամանատարների ենթակա էին: Պատերազմի առաջին շարաթներին Սեպուհի բրիգադան, որպես առանձին զորամիավորում, փաստորեն, գոյություն չուներ:

Այս սկզբունքն անտեսելու մեկ այլ օրինակ էր 7-րդ գնդի հնարավորությունների չօգտագործումը, ինչպես տեսանք «Խազմական պլանի և քարտեզների չգոյությունը» կետում:

Բ. 1. 4. Ռազմական մաներների բացակայությունը

Հայկական բանակի հրամանատարության սխալներից մեկն էլ ուժերի տարանշատվածության պայմաններում հոկտեմբերի 14-ի հակահարձակումը նախաձեռնելն էր, որն ավարտվեց անհաջողությամբ, և որից հետո դասալքությունների, պարտությունների և նահանջների շղթան դարձավ արդեն անկառավարելի, և «Կարսի հանձնումը հեշտ ըմբռ-

նում դարձավ»<sup>81</sup>: Մինչդեռ, եթե Սեպուհի բրիգադայի միավորները հգդիրից և Դիլիջանից հասած լինեին Կարսի ուազմաճակատ և դրանք օգտագործվեին Կարաբեքիրի զորքի թուլ կետերին հարվածելու համար, հայկական հակահարձակման ճակատագիրը կարող էր այլ լինել: Այդ հակահարձակումը հիմնական թիրախ ուներ ուազմաճակատի կենտրոնական հատվածը, որտեղ թուրքերի դիրքերը ամենառուժեղն էին:

Ի տարբերություն հայկական այս անհաջողությունների և բացթողումների, հմտու զորավար Կարաբեքիրը նաև ուազմական մանկրների ու խաբեության հիմնալի վարպետ էր: Օգտվելով Կարսի հարավում Հաճի Խալիլ բարձունքից մինչև Ախուրյան ձգվող մոտ 50 կիլոմետր տարածության համարյա անպաշտապան գրությունից, ինչը ուազմական մեծ սխալ էր<sup>82</sup>, հոկտեմբերի վերջին օրերին իր ուժերի մեծ մասը մանկրով մղեց Կարսից արևելք՝ դրանով համարյա բոլոր կողմերից պաշարման տակ առնելով Կարսի հայկական զորքը և կտրելով Կարս-Ալեքսանդրապոլ խճուղին և երկաթուղագիծը: Այդ օրերին (հոկտեմբերի 27 և 28), «թշնամու գլխավոր ուժերը կորսված էին» և Կարսի հրամանատարության այդ օրերի «գեկուցումները կարելի է որակել «փնտուտոք» բառով»<sup>83</sup>: Եվ միայն քաղաքի հարավակողմի բարձունքներում և Վեզինքեյում (Կարսի արևելքում) գտնվող մի բուռ հայկական վաշտերի հերոսական դիմադրությունը փոքր-ինչ ուշացրեց թուրքական հիմնական ուժերի առաջխաղացումը, բայց արդեն շատ ուշ էր: Մինչ ակադեմիական կրթությամբ գինվորականները հարվածի սխալ տակտիկա էին ընտրել, նույնպիսի կրթություն չունեցող Սեպուհն առաջարկում էր ճիշտ այն, ինչ ընտրեց Կարաբեքիրը հոկտեմբերի վերջին օրերին: Խոսքը տանք Սեպուհի մոտ ծառայած անանուն օրագրողին, որը հոկտեմբերի 14-ին նշել է հետևյալը. «Սեպուհը գետ սկզբից դեմ էր այդպես շուտափովթ ընդհանուր հարձակման անցնելուն, նրա կարծիքով, ճակատից եթե հարձակվելու լինենք, բնավ չենք հաջողի,

<sup>81</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 6, էջ 87:

<sup>82</sup> Նույն տեղում, էջ 92:

<sup>83</sup> Նույն տեղում, թ. 7, էջ 69:

և այդպես էլ եղավ: Նա գտնում էր, որ մեր ուժեղ հարձակումները պետք է կատարվեն թևերից, մանավանդ ձախից<sup>84</sup>, որտեղ մենք անպատճառ պետք է անցնենք թշնամու թիկունքը և այդպիսով ստիպենք նրան թուլացնել կենտրոնը և ապա հարվածել նրա կենդանի ուժերին»<sup>85</sup>: Իր հուշերում Կարաբերիրն ասում է, որ հայերի հետ իր նախորդ բախումների ժամանակ միշտ հարձակվել է կենտրոնական հատվածից, սակայն Կարսի դեպքում նախընտրեց դա չանել, այլ՝ նախ խարել հայոց զորքի հրամանատարներին՝ նրանց հավատացնելով նույն սցենարը որդեգրելու մեջ, և, երկրորդ, օգտվել իր ունեցած այլ առավելություններից: «Իմ այս տեղերը (Կարսի շրջանը՝ Գ. Յ.) և Կարս բերդաքաղաքին հողերը թիզ առ թիզ ճանշնալս, հայոց տկար կետերը գիտնալով, Կարսի վրա փոխանակ ճակատեն հարձակելու, արևելքեն հարձակիլս եղած է»<sup>86</sup>:

#### Բ. 1. 5. Տեղանքի առավելություններից օգտվելու նկատմամբ անփույթ մոտեցումը

Այս առնչությամբ, մարտերի մասնակից Հայ Գնդումին նշում է իրամներ փորելու, գրաված դիրքերը ամրացնելու, պաշտպանելու և դրանք անվտանգ դարձնելու նկատմամբ մտահոգության բացակայությունը: Ավելին, նա նշում է հայկական բանակում «պատսպարվելու, թշնամիեն չնկատվելու և չխուզարկվելու համար էական նշանակություն վայելող վարժության և բծախնդրության պահան» ու ամբողջական բացակայությունը»<sup>87</sup>:

<sup>84</sup> Այսինքն՝ Կարսից հարավ լնկած տարածքից:

<sup>85</sup> Անանուն, «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը», Երևան, 1994, էջ 98-99:

<sup>86</sup> «Քաղը Կարաբերիրի հուշերը Հայաստանի Հանրապետության վրա թրքական հարձակումներուն մասին», «Զարթօնք», 1966 թ., 10 օգոստոսի, էջ 2:

<sup>87</sup> ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 3 նոյեմբերի, էջ 2:

**Բ. 1. 6. Ռազմական հետախուզության և հակահետախուզության  
խայտառակ վիճակը**

Քոլոր հուշագիրները վկայում են այս մասին՝ առհասարակ հայկական հետախուզությունն ու հակահետախուզությունը որակելով շափառանց ծանր ածականներով՝ «ողբալի», «անբավարար», «մեր ամենաթույլ կողմերեն մեկը»<sup>88</sup>, «շատ ողբալի»<sup>89</sup>, «անշափ անգույն, անշափ ողորմելի»<sup>90</sup>, հեգնական իմաստով՝ «բարձր, նուիրական հաստատություն»<sup>91</sup>, իսկ նրա Կարսի բաժանմունքը, որը դեկավարում էր գլխապետ Մեդվեդիք, «մի ծաղր էր և ոչ լուրջ հաստատություն»<sup>92</sup>: Ուղղակի ապշել կարելի է կարդալով հետևյալ վկայությունը. «Արդահանի և Կարսի բնիկ թուրք երևելիներեն ոմանք ... պատերազմը չսկսած, նույնիսկ կայցելեին սահմանագլուխը պաշտպանելու կոշշած մեր գունդերու և այսպես գիտակ կապահվեին մեր բոլոր պետական-զինվորական բնույթ կրող խնդիրներուն»<sup>93</sup>:

<sup>88</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 33, 71, 284:

<sup>89</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 5, էջ 75:

<sup>90</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 18, թ. 53:

<sup>91</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 2, թ. 297:

<sup>92</sup> Նույն տեղում, գ. 6, թ. 17: Տարօրինակ է, որ պատմական գիտությունների թեկնածու Վանիկ Վիրաբյանը Հայաստանի առաջին հանրապետության հետախուզությանը նվիրված իր աշխատության մեջ (Վանիկ Վիրաբյան, «Հայաստանի առաջին հանրապետության հատուկ ծառայությունները 1918-1920թթ.», Երևան, 1998) դրական երանգներով է նկարագրում այս մարմնի աշխատանքը, մինչդեռ հուշագրություններն ու փաստաթթերը վկայում են հակառակը, առնվազն՝ հետախուզական մարմնների դեկավարության անփուլթ մոտեցման մասին: Այդուհանդերձ, Վ. Վիրաբյանը խոստովանում է, որ հայկական հատուկ ծառայություններն «ի վիճակի չեղան քիչ թե շատ շոշափելի առավելության հասնել, հենց թեկուզ թուրքական հատուկ ծառայությունների (մասնավորապես հակահետախուզության) գեմ պայքարում» (էջ 21): Նատ մեղմ է ասված... Ի՞նչ «առավելություն», տվյալ ժամանակաշրջանի համար հայկական և թուրքական հետախուզությունների միջև համեմատություն անցկացնելն իսկ ճիշտ չէ:

<sup>93</sup> ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 3 նոյեմբերի, էջ 2:

Մյուս կողմից, ըստ Հայ Գնդունու՝ «Երևանը ձեռք չէր առած և չէր առներ ոչ մեկ ազգու գենք՝ թափանցելու թշնամի թուրքիայի ծրագիրներուն և հաշիվներուն»<sup>94</sup>: Նույն աղբյուրը հայտնում է, թե հայկական ուազմական հետախուզությունն ու հակահետախուզությունը «պարզապես մոռցված, անտեսված էր հայկական բանակին իրավասու և պատասխանատու պետքերեն»<sup>95</sup>: Այդ մարմինը «ոչինչ չգիտեր, նա զբաղված էր ինտրիգներով և իր հաշիվներով, բայց ոչ պետական վսեմագույն իմաստի պահպանությամբ: ... Մեր հրամանատարությունը ոչինչ չգիտեր, թե ինչ է կատարվում սահմանից այն կողմը, նա չգիտեր և երկրի տրամադրությունը դեպի ժամանակի վերապրումները»<sup>96</sup>: Այս մարմինը Երևան ուղարկած իր գրություններով հերքում էր հետախուզական բնույթի այն տեղեկությունները, որ ձեռք էր բերում Կարսի նահանգապետը Արդահանի գավառապետ Կաղիմովի և քուրդ երևելիների միջոցով:

Հայկական հետախուզության համարյա չգոյության պատճառով, բարձրագույն հրամանատարությունն ու գլխավոր շտաբը մինչև պատերազմի վախճանը իրական պատկերացում չեն ունեցել թուրքական ուժի և պլանների մասին<sup>97</sup>: Թուրքական հետախուզությունը հայկական միջավայրում գործել է համարյա անարգել և մեծ արդյունավետությամբ: Արժանահավատ աղբյուր տ. Կորյուն քահանա Քոթանջյանը, որը Կարսից ամենավերջինը դուրս եկող հայերից է (գրավված քաղաքում մնացել է երկու տարի), վկայակոչում է թուրքական 9-րդ դիվիզիայի հրամանատար, գնդապետ Հյուսնի բեյի խոսքը. «Զեր բոլոր ժողովներում խոսված ճառերը և զինվորական գաղտնի որոշումները մեզ անմիջապես

<sup>94</sup> Նույն տեղում:

<sup>95</sup> Նույն տեղում:

<sup>96</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թթ. 125-126:

<sup>97</sup> Արտաշես Բարալյան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 53-54; Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 409, ծնթ. 29; ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 3 նոյեմբերի, էջ 2; Վահնիկ Վիրաբյան, «Հայաստանի առաջին հանրապետության հատուկ ծառայությունները 1918-1920թթ.», Երևան, 1998, էջ 21; ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 4, էջ 61:

տեղեկացնում էին մեր բարեկամ հայերն ու մոլոկանները»<sup>98</sup>: Հնարավոր է, որ թուրք զինվորականը շափազանցնում է, սակայն դա ասելու որոշակի հիմքեր կային: Հայազգի բոլցիկ տականքը բացահայտորեն կոչ էր անում հայկական պետության կործանման և լրտեսում էր սեփական ազգի ու պետության շահերի դեմ՝ ի նպաստ «Եղբայրական», «ինտերնացիոնալիստ» թուրքերի: Կարաբեքիրի մոտ կային ուրացող հայազգի տականքներ, այդ թվում՝ նախկինում Հայ կաթոլիկ և Հայ առաքելական եկեղեցիների մի վարդապետ, որը մահմեղականություն էր ընդունել և կարաբեքիրի առանձին թարգմանն էր դարձել<sup>99</sup>, մի «հրեշ հայ դավաճան»<sup>100</sup>, որը «շարագործ ոստիկանի պաշտոն էր կատարում»<sup>101</sup>:

Կարելի՞ էր հայկական շահերին նվիրված հետախուզական մարմին ակնկալել այն դեպքում, երբ Հայկական բանակի գլխավոր շտաբի հետախուզական բաժինը (որի վրա դրվել էին նաև հակահետախուզական պարտականություններ), գլխավոր շտաբի այլ բաժինների հետ, ստեղծել է ոռւսական բանակի սպա, սկզբնական շրջանում գեներալ Անտոն Դենիկինի ոչ պաշտոնական ներկայացուցիչ գնդապետ Ջինգկիշը:

<sup>98</sup> «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 1 (107), 2006, էջ 107: Լսու ականատես Գարեգին եպս. Հովսեփյանցի՝ քաղաք մտած ասկարներն ու բաշիբոզուքները ամեն տեսակ այլանդակություն գործելիս խնայում էին իրեն՝ եկեղեցականի մորուքն ընդունելով որպես մոլոկան աղանդավորի հատկանիշ և նույնիսկ ասում էին, թե «մոլականները մեր եղբայրներն են» («Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 3, 1989, էջ 130):

<sup>99</sup> «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 3, 1989, էջ 104:

<sup>100</sup> Արտաշես Ալեքսանդրյան, «Կարս 1920-21», Երևան, 1986, էջ 62:

<sup>101</sup> «Ոգուն շապավինելու արդյունքը», էջ 49: Իր ուրացում-դավաճանությունն առավել շեշտելու համար «Հիրդայաթ» (թուրքացված արաբերենով նշանակում է «Ճիշտ կրոնի ուղին ընտրած»)՝ աշխարհական անունով՝ Թագեւոս, կրոնականով՝ Էմմանուէլ կոչված այս տականքը նույնիսկ խափանել է գերությունից Գարեգին եպս. Հովսեփյանցի փախուստը (նույն տեղում): Այս ազգուրաց դավաճանի ստորությունների մասին հավելված տե՛ս Արտաշես Ալեքսանդրյան, «Կարս 1920-21», էջ 67, 91-94, 103-104:

Նա ողջ ՀՀ բանակի գլխավոր շտաբը կազմավորել էր Դենիկինի կամավորական բանակի նույն մարմինների պատճեննումով (Դենիկինն էլ պատճենել էր ռուսական ցարական բանակի համապատասխան մարմինները)<sup>102</sup>: Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի բոլոր պատասխանատու պաշտոններին նշանակված էին օտարներ<sup>103</sup>: Այդ բաժինն իր տեղեկագիրները (ավելորդ է ասել, որ դրանք կազմվում էին ոչ պետական լեզվով՝ ռուսերենով) պատրաստում էր երկու օրինակից, որոնցից մեկն ուղարկվում էր մինիստր-նախագահին (վարչապետին), երկրորդը... Դենիկինին: Եվ միայն 1920 թ. երկրորդ կեսին, երբ հայ-թուրքական փոքրածավալ ընդհարումներն սկսվել էին ՀՀ բանակի 0լթի հարձակումով և Դենիկինի Կամավորական բանակն էլ իրարահաջորդ պարտություններ էր կրում Կարմիր բանակից՝ Հյուսիսային Կովկասում, ՀՀ կառավարությունը փորձեց գենիկինյան հավատարմություն ունեցող սպաներին մեկուսացնել «հետախուզական գործունեությունում անմիջական դերից, որը նրանք վարում էին միտումնավոր և հարձարեցնելով գլխավորապես Դենիկինի կամավորական բանակի շահերին»<sup>104</sup>:

Ի գեպ, «հայկական հետախուզությունն իր ավանդական ապիկարությունը ցուց կուտար նաև հայ-աղբբեջանական ճակատին վրա»<sup>105</sup>:

Մեկ այլ ողբերգական փաստ է այն, որ հատուկենտ դեպքերում, երբ հայկական հետախուզությանը հաջողվում էր ինչ-որ կարևոր տեղե-

<sup>102</sup> Վանիկ Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 13:

<sup>103</sup> Այս մասին տես, օրինակ, ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 297:

<sup>104</sup> Վանիկ Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 14: Նույն հեղինակը գրում է, որ «հատուկ ծառայությունները կազմել են Հայաստանի առաջին հանրապետության ուսպաքաղաքական համակարգի անբաժան մասը: Հենց դրանով էր նաև Հայաստանը կազմակերպված պետություն» (նույնը, «Ամփոփում» վերջաբան, էջ 35): Եթե այսպիսին էին այդ ծառայությունների աշխատանքի որակն ու արդյունավետությունը, ապա ցավով պետք է հաստատել, որ ՀՀ-ը կազմակերպված պետություն չի եղել:

<sup>105</sup> Վահիկ Արծրունի, նշվ. աշխ., էջ 330:

կություններ կորգել, քաղաքական դեկավարությունը պատշաճ լրջությամբ չէր վերաբերվում դրանց<sup>106</sup>:

Ասվածներից կարելի է ենթադրել, որ Հայկական բանակի սեփականությունը եղող երկու ինքնաթիւնների արդյունավետությունը ռազմական հետախուզության գործում՝ բավականին ցածր է եղել:

**Բ. 1. 7. Ապաշնորհ զորահրամանատարների ուղացած  
փոխարինումներ և նրանց նկատմամբ ներողամբ վերաբերմումներ**

Գնդապետ Նիկոլայ Ղորղանյանի ապիկար դեկավարության պատճառով, Կարսի ուազմաճակատի աջ թեկի անհաջողություններից հետո միայն, հոկտեմբերի կեսին նրան այդ տեղամասում փոխարինումը Սեպուհով, այն էլ՝ իր բրիգադայի ընդամենը մեկ մասով, բավական ուշացած միջոցառում էր: Իսկ այդ միջոցին, 15 օր (սեպտեմբերի 20-ից հոկտեմբերի 5-ը) ուազմաճակատի աջ թեկի հրամանատար չի ունեցել<sup>107</sup>: Էլ ավելի հանցավոր էր անընդհատ անհաջողություններ արձանագրող գեներալ Հովսեփյանի փոխարինումը գեներալ Զազարյանով, ընդամենը հոկտեմբերի 28-ին, երբ վիճակը շափազանց բարդացել էր բերդաբարձրի շուրջ: Եվ ի՞նչ, փոխանակ նրան ուազմական դատարանի փոխանցելու, Հովսեփյանին տրվում է շատ պատասխանատու պաշտոն՝ Ալեքսանդրապոլի անկումից հետո դիմադրության նոր գիծ դարձած Արագածի ուազմաճակատի դեկավարումը: Այստեղ ևս նա ձախողվում է, և նոյեմբերի կեսին նրան փոխարինում է մինչ այդ իրեն ենթակա գնդապետ Միրիմանյանը, որը պահպանում է շորորդ գնդի հրամանատարու-

<sup>106</sup> Նույն տեղում, էջ 70: Այս մասին բազմաթիվ անգամ վկայում է նաև Ստեփան Ղորղանյանը իր հուշերում, ՀՀ դեկավարությանը մեղադրելով իր ձեռք ձգած հետախուզական բնույթի տեղեկություններն անտեսելու կամ դրանց հավաստիությանը կասկածելու մեջ: Նույնը հաստատում է նաև պատմաբան Վանիկ Վիրաբյանը Հայաստանի առաջին հանրապետության հատուկ ծառայություններին նվիրված իր աշխատություններում:

<sup>107</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 5, էջ 82:

թյունը: Իրերահաջորդ ձախողությունների համար, գեներալ Արտյոմ Հովսեփյանը գորաց նախարար Ռուբենի հրահանգով միայն նոյեմբերի կեսերին կանչվել է Երևան՝ դատվելու<sup>108</sup>, սակայն չի պատժվել, և զորաց նոր նախարար Դրոյի ցանկությամբ ազատ է արձակվել<sup>109</sup>:

Ապաշնորհ բարձրաստիճան սպաների նկատմամբ անհիմն ներողամտությունն է՝ ավելի խայտառակ բնույթ ստացավ հայ-թուրքական պատրազմի օրերին: Այստեղ մեծ դեր էր իսպան հովանավորչությունը՝ պայմանավորված սպաների կուսակցականությամբ (ինքնին ապօրինի մի իրողություն), խնամի-ծանոթ-բարեկամ գործոնով, և, իհարկե, կաշառքով: «Մեր առաջնորդներուն մեջ ավելի զորավոր էին հեղափոխական թափը և արենակցական կապը, քան թե պետական կենսական շահերու ըմբռումը»<sup>110</sup>, վկայում է 1920 թ. ապրիլից Կարսում գտնված դաշնակցական գործիչ Վահե Արծրունին: Նման պայմաններում խոսել բանակում կարգապահության մասին՝ անմտություն կլիներ: Մեջբերենք մի քանի օրինակ.

Ախուրյանի մոտ քրդական ձիավոր մի խմբի հանդիպելով, փախած և զինամթերքը թշնամուն թողած<sup>111</sup> փոխգնդապետ Ղոնդախյանը թեև դատի տրվեց, «բայց մնաց անպատճիծ և նշանակվեց նոր պաշտոնի»<sup>112</sup>:

Գեներալ Փիրումյանի փեսան՝ գնդապետ Միրզուլ, առանց կոփվ տալու փախչում է Ալեքսանդրապոլ, նախօրոք այնտեղ տեղափոխելով իր ունեցվածքը: Ռուբենը նրան բանտարկելու հրաման չի տալիս<sup>113</sup>:

<sup>108</sup> Նույն տեղում, թ. 9, էջ 114:

<sup>109</sup> Արտաշես Բաբալյան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 68:

<sup>110</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 39:

<sup>111</sup> ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 6, թ. 26; նույնը, գ. 8, թթ. 3-6:

<sup>112</sup> Արտաշես Բաբալյան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 56: Ստ. Ղորդանեանը գտնում է, որ «փոխգնդապետի տեղը 24 ժամվար ընթացքում ի կատար ածված կախաղանն էր», «բայց հայկական դատարանը, սկզբից ևեթ մի ֆիլցիա, կորով շունեցավ արդարադատություն կերտելու» (ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 8, թ. 8):

<sup>113</sup> ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 6, թ. 39-40: Սա այն սպան է, որի զինվորները քիչ էր մնում ապստամբեին 1919 թ. վերջին օրերին, երբ նա գողացել էր իր գնդին հատկացված սնունդը: Քննությունը հաստատել էր կողոպուտի փաստը, և, հակառակ իր անե-

Որոշ դեպքերում էլ կային շհիմնավորված և անարդարացի փոխարինումներ: Այսպես, զոր Հովսեփյանը, իր փոխարինումից բոպեներ առաջ ստորագրում է կարգադրություն, որով ճակատի առաջին գծում գտնվող 8-րդ գնդի առաջին գումարտակի հրամանատարությունը հարյուրապես Հայ Գնդունուց փոխանցում է հազարապետ Աղայանին, ինչ է թե վերջինս աստիճանով ավելի բարձր գինվորական է եղել... Պաշտոնի հանձնման ձևականությունները հազիվ լրացած սկսվում է թուրքական հարձակումը այդ գումարտակի պաշտպանած տեղամասում<sup>114</sup>:

Բ. 1. 8. Զինվորական բազմաստիճան ենթակայությունը և այս հարցում  
ռուսական շաբլոնի կապկոմը

Կարսի ուազմաճակատի թե՛ տեղագրությունը, և թե՛ հարաբերական փոքրությունը պարտավորեցնում էին ուազմական հրամանատարության մեկտեղում, այն էլ՝ կարող, պատկառազգու, առինքնող, անձնական դրական օրինակ ծառայող ուազմահրամանատարի ձեռքում: Մինչդեռ այս հարցում թույլ տրվեցին կոպիտ սխալներ: Առաջին, ուազմական գործողությունների կենտրոնական հատվածի հրամանատարն էր գեներալ Արտյոմ Հովսեփյանը, որի վերադասն էր Կարսի բերդապահ՝ ու ուազմաճակատի փաստական հրամանատար, գեներալ Դանիել-բեգ Փիրումյանը<sup>115</sup>: Վերջինիս անմիջական զեկավարն էր ուազմաճակատի անվանական հրամանատար, գեներալ Մովսես Սիլիկյանը, որը նատում էր ուազմական գոր-

րոշ՝ գեներալ Փիրումյանի միջամտությանը, նրան ազատել էին գնդի հրամանատարությունից: Ալդուհանդերձ, Միրզուկը շատ շուտով նշանակվել է Կարսի մի գնդի հրամանատարի օգնական (ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 7, մաս 2, թ. 254), այսինքն «պատժվել» է ընդամենը թեթևակի պաշտոնագրկումով:

<sup>114</sup> Հայ Գնդունի, «Դրվագներ Կարսի կորիներեն», «Պայքար» ամսագիր, Բոստոն, 1931, սեպտեմբեր, էջ 80:

<sup>115</sup> Ի դեպ, ըստ լավատեղյակ անձ, ՀՀ կառավարության՝ Կարսի ուազմաճակատ ուղարկված լիազոր, ինսամատարության նախարար Ա. Բաբայանի, «առաջինը իբր թե պիտի ենթարկվեր երկրորդին, բայց մենք բնավ այդ չնկատեցինք». (Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայութենիք», 1923, թ. 12, էջ 56):

ծողովթյունների թատերաբեմից շուրջ 70 կիլոմետր հեռու՝ Ալեքսանդրապում<sup>116</sup>: Սիլիկանի վերադասն էլ զորքի ընդհանուր հրամանատար գեներալ Թովմաս Նազարբեգյանն էր, որը նստում էր Երևանում: Այսպիսով, ստեղծվել էր շորս աստիճանի հրամանատարություն, մեկ մարմին՝ շորս գլխով: Մա եթե մեկ կողմից ոռւսական ռազմարվեստի բազմաստիճան հրամանատարման սկզբունքի կապկում էր, մյուս կողմից՝ կատարվել էր ինքնահավան և միմյանց նկատմամբ նախանձով ու ատելությամբ լցված գեներալների փառասիրությունը բավարարելու համար: Յուրաքանչյուր հրամանատար, իհարկե, ուներ նաև իր շտաբը՝ բազմաթիվ սպաներով: Նման պայմաններում անհնար էր դարձել օպերատիվ ռազմական որոշումներ ընդունելը, հրահանգներ արձակելն ու դրանք տեղ հասցնելը, ռազմական գործողությունների համակարգումը: Եթե ավելացնենք, որ հեռագրական և հեռախոսային կապը հաճախ խզվում էր, երբեմն՝ երկար ժամանակով, ապա պատկերը ամբողջական կլինի: Շատ են վկայությունները, թե ճակատի այս կամ այն զորամիավորը տեղյակ չէր, թե ինչ է կատարվում թևերում<sup>117</sup>, նույնիսկ հարկան զորամիավորներում<sup>118</sup>: Մյուս սխալն այն էր, որ այս բոլոր զորահրամանատարների միջև հարաբերությունները, մեղմ ասած, բարեկամական չէին. Նրանց միջև կային տևական նախանձ, փոխադարձ դավեր: «Մինչդեռ մեր դիմաց մեկ կամք, մեկ հրամայող կար – Քյազըմ Կարաբեքիր փաշան»<sup>119</sup>:

#### Բ. 1. 9. Զորակոչի բարձիթողի վիճակը

Զորակոչի կարևոր գործի նկատմամբ ՀՀ կառավարության մոտեցումը, Հայ Գնդունու համաձայն, «մակերեսային և իրապես վարժապե-

<sup>116</sup> Շտաբի հաստատումը Ալեքսանդրապում Կարսի նահանգապետ Ստ. Ղորդանյանը «Ճակատագրական» սխալ է համարում. տե՛ս ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 362:

<sup>117</sup> Տես, օրինակ, Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 36:

<sup>118</sup> Տես նաև ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 96:

<sup>119</sup> Արտաշես Բաբալյան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 56:

տական» էր<sup>120</sup>: Սիմոն Վրացյանի գնահատումով՝ զորակոչն ու առհասարակ թիկունքը «լավ կազմակերպված» չէին<sup>121</sup>, իսկ Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանի համաձայն, այդ պատասխանատու գործը «մի այնպիսի շփոթ, մի այնպիսի քառո էր, որի նմանը երևակայել անգամ դժվար է»<sup>122</sup> և «գտնվում էր անշնորհք և ապիկար աղմինիստրացիայի ձեռքբում»<sup>123</sup>: Թիկունքի պետ, գեներալ Միքայել Արեշյանը մի ապաշնորհ մարդ էր և «փոխանակ իրեն հանձնված նոր-նոր ուժերը կազմակերպելով ճակատն ուղարկելու, ավելի կքաջալերեր դասալքությունը գեպի Վրաստան»<sup>124</sup>: Բանակի Զորակոչային վարչությունը գլխավորում էր ուսւ գնդապետ Մակավիելը: Նահանգներում ևս ուսւների կամ հայությունից լրիվ ուժացած սպաների էր հանձնվել այս հույժ կարեոր միջոցառման իրականացումը: Նրանք եթե նույնիսկ բանիմաց և մասնագետ լինեին այս հարցում, այնուամենայնիվ, սրտացավ չէին կարող լինել ուսւ սպաների համար՝ Հայաստանի Հանրապետությունն իրենց հայրենական պետությունը չէր, իսկ հայազդի սպաներից շատերի հոգում ՀՀ-ը որպես սեփական, հայրենական պետություն չէր ընկալվում:

Զորակոչի պլան գոյություն շուներ, իսկ եթե կար, դրանից անտեղյակ էր Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանը, որի վրա էր զրվել զորակոչի կատարումը նահանգում<sup>125</sup>: Նահանգի զորակոչն իրականացնելու կոչված հայանուն, հայերեն ոչ մի բառ շիմացող գնդապետին «նույնչափ էր հետաքրքրում հայկական գործը, որքան ինձ և ձեզ՝ անցյալ տարվա քամին», - հեգնում է նահանգապետն իր հուշերում<sup>126</sup>:

<sup>120</sup> ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 29 հոկտեմբերի, էջ 2:

<sup>121</sup> Սիմոն Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 508:

<sup>122</sup> ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 7, մաս 1, թ. 155:

<sup>123</sup> Նույն տեղում, գ. 10, թ. 4:

<sup>124</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 292:

<sup>125</sup> ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 6, թ. 94:

<sup>126</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 2, թ. 165:

Բ. 1. 10. Նոր ստացված կանադական հրացաններին  
հայ զինվորների անվարժ լինելը

Թուրքական հարձակումից հետո հայտարարված գորակոշով «գեն-քի տակ առնված մարդոց գրեթե մեծ մասը անտեղյակ էր հրացանի գործածության, զին. տարրական կրթություն ու վարժություն չէր տեսած», - վկայում է առաջին գծում մարտնչած 8-րդ գնդի առաջին գումարտակի հրամանատար Հայ Գնդունին<sup>127</sup>: 1920 թ. աշնանը Մեծ Բրիտանիայի՝ ՀՀ-ին վաճառած կանադական հրացանները «բոլորովին անպես զենքեր էին», իսկ հայ զինվորն ու զինակոչյիկը դրանց գործածությանը «չէր մարզված հարկ եղածին չափ»<sup>128</sup>, դրանց «վարժ չէր»<sup>129</sup>: Կարո Սասունու համաձայն՝ այդ հրացանները ծանր էին և կոշտ, նրանց արձակած փամփուշտների զգալի տոկոսը չէր պայմում, ինչը հոգեբանական վատ աղդեցություն էր թողնում զինվորների մոտ<sup>130</sup>: Մյուս կողմից, «նույնիսկ սպաներից ոմանք դեռ չէին թափանցել նոր զենքի գործածության գաղտնիքներին, որպեսզի սովորեցնել կարողանային իրենց ենթարկյալ զինվորներին»,- վկայում է մարտական գործողությունների շրջան կամավոր մեկնած Գարեգին եպս. Հովսեփյանցը<sup>131</sup>:

Բ. 1. 11. ՀՀ բանակի և պաշտպանության նախարարության  
ապահնութիւն դեկավարությունը

Այս մասին գրում են գրեթե բոլոր հուշագրողները: Զորահրամանատարների հասցեին հուշագրողների մոտ հանդիպում ենք ամենաբացասական որակումների: Նրանց մեծ մասը բարձրաստիճան հրամանատարությունը դասակարգում է երկու խմբակցություններում.

<sup>127</sup> ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 29 հոկտեմբերի, էջ 2:

<sup>128</sup> Նույն տեղում, 1932 թ., 8 նոյեմբերի, էջ 1:

<sup>129</sup> Սիմոն Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 508:

<sup>130</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 5, էջ 80:

<sup>131</sup> Գարեգին արք. Հովսեփյանց, «Կյանքիս ամենադժբախտ օրը և երջանկությանս բռպեն», տե՛ս «Ոգուն շապակինելու արդյունքը», էջ 31:

1. Հայ սպայության «հայրերը». սրանք ոռւսներ էին կամ բացառապես ու միայն ոռւսերեն խոսողներ:

2. «Նորընծա հայ սպաները». սրանց մեծ մասը նախապես եղել է «տիրացու, խանութպան, գործակատար», կամ, «լավագույն դեպքում, ծխական ուսումնարանի վարժապետ»: Սրանք ոռւսների և ոռւսախոսների միջավայրում տառապում էին ստորակայության բարդույթով: Հստ այս դասակարգումն անող Ստ. Ղորղանյանի՝ այս դասը «տքնում էր ոռւսերեն խոսելու, բայց նա ոռւսերեն միայն կոտրատում էր...»՝ «առաջ բերելով ոռւսների մեջ միայն հեղնանք և միայն ծաղր»<sup>132</sup>:

Ներկայացնենք այս հրամանատարների ապաշնորհության ընդամենը մեկ օրինակ: Նկարագրելով հոկտեմբերի 28 լուս 29-ի գիշերը ռազմաճակատի կենտրոնական հատվածի հրամանատարությունը ստանձնած գեներալ Ղազարյանին իր ներկայանալը, 8-րդ գնդի առաջին գումարտակի հրամանատար Հայ Գնդունին իր հուշերում գրում է. «Գորավարը դրությունն ըմբռնողի չէր նմաներ, անտարբերությամբ կվարվեր մեր գեկուցումին հետ, նոյնիսկ կատարելապես անուշադրության մատնելով իմ կտրուկ հայտարարությունս, որ թուրքերը հետևյալ օրն իսկ եթե ուզեին առաջ շարժիլ և հայ բանակը շկարենար լուրջ դիմադրություն մը կազմակերպել, Կարսը կիյնար նույն օրն իսկ»<sup>133</sup>:

ՀՀ բանակի հրամանատարության ճիշտ հակառակ պատկերն էր թուրքական կողմում: Կարարեքիրի ստորադասները աշքի էին ընկնում բարձր որակներով: Օրինակ, գնդապետ Խալիլի բեգը՝ «շատ քաջ, հանդուրգն» մի հրամանատար, Կարսի վրա հարձակման «հրամանը տանող Քյազըմ բեգեն խնդրած է, որ 12-րդ բանակին հետ տեղը փոխվի և ամ-

<sup>132</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 397-399:

<sup>133</sup> Հայ Գնդունի, «Դրվագներ Կարսի կոիլներեն», «Պայքար» ամսագիր, 1931, սեպտեմբեր, էջ 82: Ղազարյանը այն գնդապետն էր, որ 1919 թ. նոյեմբերին Սյունիք մեկնելու որպես նախապայման ՀՀ կառավարությունից պահանջել էր «կանխավ աստիճանի բարձրացում և կրկնակի ամսական» (0ննիկ Զարմունի, «Յեղի հրամայականը», Երևան, 2007, էջ 158), ինչը և ստացել էր...

րություններուն վրա ինք հարձակի»<sup>134</sup>: «Քաղը բեգ... մերժել է ընդառաջել խնդրանքին:

Բ. 1. 12. Հույսը Կարսի անառիկ ամրությունների վրա դնելը

Դրանց վրա իրենց հույսն էին դրել շատերը՝ բարձր զորահրամանատարներից մինչև ՀՀ քաղաքական վերնախավանին ու Կարսի բնակչությունը: Եթե բացակայում է պայքարելու, դիմադրելու և հաղթելու ոգին, ամենաանառիկ ամրություններն իսկ անկարող են պարտության դառնությունը կանխելու: Ճիշտ է այն, որ «Եթե Կարադաղի ամրություններից մեր թնդանոթները միայն գործեին, ոչ միայն քաղաքը պաշտպանված կլիներ, այլ նոքա (թուրքերը՝ Գ. Յ.) չեին կարող բերդին իսկ մոտենալ», - գրում է Գարեգին սրբազանը<sup>135</sup>: Սակայն, գերաշնորհ հայրը մոռանում է, որ թնդանոթները բանեցնում են մարդիկ, որոնք պետք է աներ հավատք ունենան իրենց հաղթանակի նկատմամբ:

Հրամկազմի մի մասը չէր էլ հավատում Կարսի ամրություններին: «Նազարբեգյան կարծում էր, որ թշնամու ճնշման տակ, ստիպված պիտի լինենք թողնել Կարսը և, պահպանելով կենդանի ուժը, կարգի բերել մեր գնդերը, զինել հագցնել և ապա շափվել թշնամու հետ»<sup>136</sup>: Նույն կարծիքին է եղել նաև գլխավոր շտաբի պետ, գեներալ Հովհաննես Հախվերդյանը: Կառավարությունը մերժում է այս առաջարկը՝ հուսալքում շառացացնելու համար: Կ. Սասունին ճիշտ է համարում նազարբեգյանի առաջարկը և ավելացնում: «Կարսի բերդին և քարերուն վրա հույսը դնելը ամենեն մեծ սխալը եղած է»: «Կարսի բերդը եղավ գլխավոր պատճառը Կարսի աղետալի անկման»<sup>137</sup>:

<sup>134</sup> «Քաղը Կարաբեքիրի հուշերը Հայաստանի Հանրապետության վրա թրքական հարձակումներուն մասին», «Զարթօնք», 1966 թ., 10 օգոստոսի, էջ 2:

<sup>135</sup> «Խոր շապավինելու արդյունքը», էջ 41:

<sup>136</sup> Արտաշես Բարձրյան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 55:

<sup>137</sup> Հ.Պ.Պ., «Հայրենիք», 1926, թ. 7, էջ 73-74:

Սակայն էլ ավելի վրդովլեցուցի փաստ է այն, որ Կարսի ամրությունների նկատմամբ դրսեռքել է անփուշթ վերաբերմունք նույն ինքը՝ բերդապահն նշանակված գեներալ Դանիել-բեկ Փիրումյանը<sup>138</sup>: Հենց սկզբից միասնություն չկար այն հարցում, թե հարկավո՞ր է արդյոք Կարսը պահպանել որպես բերդաքաղաք, թե՞ ոչ: Ինչպես շատ հարցերում, այս հարցն էլ թողնվում է լուծված և բարձիթողի վիճակում: «Բերդը և՝ գոյություն ուներ և՛ ոչ: Բերդապահն կար, ինչպես նաև հրետանիի պետ, բայց զորք չկար»<sup>139</sup>: Եվ միայն պատերազմը սկսվելուց հետո հապճեալ կերպով մի շարք կարգադրություններ են անում, որոնք երկար ամիսների անփութության պատճառով ստեղծված ողորմելի վիճակը չէին կարող հաշված օրերի ընթացքում հեղաշրջել: Հոկտեմբերի վերջին շաբաթը ի վերջո սկսում են կարգի բերել բերդի՝ «երեսի վերա ընկած բազմաթիվ թնդանոթները», հեռախոսային ու հեռագրական կապը վերականգնել և այլ անհրաժեշտ աշխատանքներ տանել թնդանոթածիգ սպաներ ճարել<sup>140</sup>:

### Բ. 1.13. Հայկական երկարուղու խալտառակ վիճակը

Սա ևս կարելի է դասել ուսպական բնույթի սխալների շարքում: Օրագրողը հոկտեմբերի 3-ին գրել է. «Նավթ ու մազութ չունենալու պատճառով, մեր երկաթուղագիծը համայն Հայաստանում այս քանի շաբաթ է, որ ի սպառ կանգնել է»: Օրագրողը վրդովված ավելացնում է. «Ինձ մնար, ես Զամալյանին<sup>141</sup> առաջին հերթին ուսպակաշտային դատարանի կհանձնեի»<sup>142</sup>:

Հայկական երկաթուղում կաշառքն ու կողոպուտը վերածվել էին «բնական» երկութիւնների: «Երկաթուղու ամեն մի կայան մի սատրապություն, «ինքնորոշվող» մի հաստատություն էր, ուր գնացքը պետք է

<sup>138</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 58:

<sup>139</sup> Նույն տեղում:

<sup>140</sup> ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 7, մաս 3, թթ. 364, 367:

<sup>141</sup> Հաղորդակցության նախարար Արշակ Զամալյան:

<sup>142</sup> Անանուն, «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը», էջ 88:

կանգներ և վճարեր իր մաքսը»<sup>143</sup>; Երկաթուղու Կարսի նահանգի հատվածում կողոպտում էին հատկապես հարուստ թուրքերին; Նահանգապետը երկաթուղու միլպետին հեռացնում է աշխատանքից, բայց որոշ ժամանակ անց իմանում, որ Երևանից նրան նորից նշանակել են նույն պաշտոնում՝<sup>144</sup>:

## Բ. 2. Ռազմահոգեբանական պատճառներ և սխալներ

Բ. 2. 1. Պատերազմին հոգեբանական անպատրաստվածությունը,  
բուրբական վտանգի արհամարհումը կամ, առնվազն,  
թերագնահատումը և սեփական  
կարողությունների գերագնահատումը

Եթեր համոզումով, սա Կարսի և դրան հետևած ՀՀ անկման գլխավոր գործոններից է։ Որևէ պատերազմի կամ նույնիսկ դրա վտանգի նկատմամբ հոգեբանական անպատրաստությունն անխուսափելիորեն առաջնորդում է մարտական ոգու թուլացմանը<sup>145</sup>: «Կառավարության ու պարլամենտի համար տաճկական վտանգ չկար, կամ այդ վտանգը սպառնալից չէր», գրում է նախարար Արտաշես Բաբայանը<sup>146</sup>: Դա ունի իր հոգեբանական բացատրությունը. ՀՀ-ի Կարսի մարզը ձեռք էր բերել հեշտությամբ, առանց մեծ զոհողությունների՝ այն ստանալով բրիտանացիներից 1919 թ. գարնանը: Իսկ ինչ ձեռք է բերվում հեշտությամբ, ընդհանրապես, իսկական արժեքը թերագնահատվում է, նմանապես՝ թերագնահատվում են այն կորցնելու վտանգն ու նշանակությունը:

<sup>143</sup> ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 12, թ. 68:

<sup>144</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 1, թթ. 41-44:

<sup>145</sup> Տե՛ս նաև Արարատ Հակոբյան, «1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը», էջ 28:

<sup>146</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 54: Տե՛ս նաև Վահե Արծրունի, նշվ. աշխ. էջ 35:

Թուրքական վտանգի թերագնահատումն ուղեկցվում էր սեփական կարողությունների անհիմն գերագնահատումով, «որովհետև հաղթական էինք մեր անկախության առաջին օրերից իսկ», «լավ զինված և պարենավորված, Անդրկովկասում կովողի հոշակ հանած, թվով գերազանց» բանակ ունենք և «ուժեղ էինք Անդրկովկասյան մյուս հանրապետությունների համեմատ»<sup>147</sup>: Հստ Կարո Սասունու՝ «Հայկական զինվորական անձնավստահությունը իր կարծեցյալ թվական առավելության վրա էր»<sup>148</sup>: Առաջ ընկնելով նկատենք, որ այս դիտարկումները զարմանալիորեն նմանվում են Արցախյան ազատամարտից հետո ու մինչև օրս էլ հնչող գնահատականներին:

Հստ Գարեգին եպս. Հովսեփյանցի արժանահավատ վկայության, հայոց զորքը «գրեթե ամբոխից էր բաղկացած»<sup>149</sup>: Այդ զինակոչիկների մեծ մասը եկել էր գյուղերից, որտեղ աշնանային բերքահավաքի եռուն շրջանն էր ընթանում, և գյուղացի երիտասարդը չէր կարող չմտահոգվել օր առաջ տուն դառնալով իր ընտանիքի ձմեռվա պաշարն ապահովելու, մի քիչ էլ սկ օրվա համար իննայողություններ ունենալու բնական ու տրամաբանական ինդրով:

Զորակոչին ներկայանում էին աղքատների և «տանիք» չունեցողների որդիները: Հովանավոր ունեցող կամ կաշառք տվող երիտասարդների մի մասը փախչում էր արտասահման (մասնավորաբար Թիֆլիս), մյուս մասը տեղավորվում էր սպաների մոտ՝ ուզմական գործողություններից հեռու: Կարսի նահանգապետ Ստ. Զորդանյանը եղրակացնում է, որ զորահավաքը հավասարվել էր «ամոթալի սնանկության»<sup>150</sup>:

<sup>147</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 64-65: Նույնը հաստատում է նաև Վահե Արծրունին (Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 35):

<sup>148</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 6, էջ 89:

<sup>149</sup> Գարեգին եպս. Հովսեփյանցի օրագիրը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1989, թ. 3, էջ 146:

<sup>150</sup> ՀԱԱ, գ. 477, գ. 1, գ. 10, թ. 4:

Իւզմահոգեբանական մեկ այլ կոպիտ սխալ էր նման որակով զորակոշիկների միախառնումը՝ մասնագիտացված զորամիավորումներին, որի հետևանքով զգալիորեն նվազում էր վերջիններիս մարտունակությունը, նրանց ևս մղելով խուճապի:

Բ. 2. 2. Հրամանատարության բացարձակ անգիտությունը  
զորի որակական արժեքի մասին կամ դրա միտումնավոր  
գերազանցակառումը

ՀՀ բանակի հրամանատարությունը «Երկու խորթ և իրար հակասող ու բացառող հատվածներ էին»<sup>151</sup>: Այս մասին շափազանց ուշագրավ է ՀՀ-ում գործած Հայ ռամկավար կուսակցության ղեկավար, «Վան-Տոսաք» թերթի խմբագիր, հետագայում ՈՎԿ ղեկավարներից Արտակ Դարբինեանի վկայութիւնը: Նա երևանից գուրս գալուց առաջ, 1920 թ. աշնան սկզբում հանդիպում է վարչապետ Համո Օհանջանյանին և իր դպրոցական ընկերոջը՝ Խուբեն Տեր-Մինասյանին ու նրանցից խնդրում տեղեկություններ՝ Հայ ռամկավար կուսակցության ընդհանուր պատգամավորական ժողովին փոխանցելու համար: «Թե՛ Օհանջանյան և թե՛ Տեր-Մինասյան հավաստիացուցին ինձ, թե այդ (թուրքական հարձակման մասին շրջանառվող- Գ. Յ.) գրուցները շափազանցված են»: Խուբենն ավելացնում է. «Այսօր, երբ Հայաստան և քեմալական Թուրքիա իրարու դեմ պատերազմական վիճակի մեջ կգտնվին, իրապես շեմ գիտեր, թե ի՞նչ է մեր բանակին քանակական և որակական ուժը»<sup>152</sup>:

<sup>151</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 2, թ. 235:

<sup>152</sup> Արտակ Դարբինեան, «Հայ ազատագրական շարժման օրերեն» հուշագրության «Տեղեկագիր Ղարաբաղի, Զանգեզուրի և նախշեանի հարցին շուրջ» հատ-

Բ. 2. 3. ՀՀ բանակում համատարած անփոփոքյունը,  
անկարգապահությունն ու անպատասխանաւավությունը

Յուրաքանչյուր գործի, առավել ևս, բանակային գործի արդյունավետության ու հաջողության հիմքերի հիմքը կարգապահությունն է: Հրամանների անվարան, «անվճուաբեկ պարտավորությամբ և ճշությամբ» կատարում, հատկապես ուսումնական գործողությունների ժամանակ, գոյություն չի ունեցել ՀՀ բանակում: Ամեն մեկը «սիրում էր միայն ձառել և միայն ընդդիմախոսել»<sup>153</sup>: Դա, որպես ՀՀ բանակի մեծագույն թերություն, նշել է նույն Կարաբեքիրը. «Հայկական բանակը, բացի նորելուկ ըլլալե, ունի խախուս հիմք: Լինելով հեղափոխական կուսակցության մը զինական ուժը, չունի զինվորական անհրաժեշտ կարգապահությունը»<sup>154</sup>:

ՀՀ բանակի զինվորների, կրտսեր և բարձր աստիճանավոր սպաների մեծ մասն իր ստացած հրամանները կատարելու կամ չկատարելու իրավունք է վերապահել ինքն իրեն: Բյուրո-կառավարությունը «ուժ տվավ բանակը մեծցնելուն, առանց համապատասխան շափով ուշադրություն դարձնելու անոր կարգապահության և օրգանական կազմակերպությանը վրա»<sup>155</sup>: Զինվորական կարգապահությունը խախուղները ոչ միայն խիստ պատժի չեն արժանացել, նրանց ոչ միայն ներքել է, այլև հաճախ... նոր պաշտոններ են ստացել կամ պարգևատրվել: Օրինակ, Մայիսյան խոռվությունների ժամանակ, բոլշևիկները գնդապետ

վածից. մեջբերվել է հետևյալ ժողովածուում՝ նուպար Ակիշյան, «Մեծերեն տասը», ՌԱԿ կուսակցական գրականության մատենաշար թիվ 1, կու Անջելոս, 1990, էջ 68:

<sup>153</sup> ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 8, թ. 12:

<sup>154</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 244: Թուրքական բանակը հայկականից իր կարգապահությամբ էապես տարբերվել է նույնիսկ թալանի հարցում: Նույն ականատես աղբյուրը վկայում է, որ ասկարներին թուղթատրված էր փող և հագուստ թալանել սակայն խիստ արգելված էր ուսումնամթերքի և ոչխար-տավարի թալանը, որը թուրքական կառավարության սեփականությունն էր համարվում (նույնը, էջ 256):

<sup>155</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 47:

Նիկոլայ Ղորղանյանին նշանակել էին իրենց շտաբի պետ, և նա «ենթարկված էր խոռվարարներուն»<sup>156</sup>: Խոռվության ճնշումից հետո նրան ոչ ոք պատասխանատվության չկանչեց, և նրան վստահվեց Կարսի ուղղաձակատի աջ թեր, ուր նա միայն անհաջողություններ արձանագրեց:

Քնուապետ Ղորղանյանը միակը չէր: Ավելին, Մայիսյան խոռվությունների օրերին բոլշևիկներին չհարող բարձրաստիճան սպաները փոքրամասնություն էին կազմում: Օրինակ, Ալեքսանդրապոլի մեջ, սպայությունը ճանաչել էր Խազմահեղափոխական կոմիտեի իշխանությունը<sup>157</sup>, իսկ Փիրումյանն իրեն ենթակա գեներալ Արտյոմ Հովսեփյանի և գնդապետ Վահան Տեր-Առաքելյանի հետ այդ օրերին չեզոքություն հայտարարեց և «անհոգ-անհոգ փողոցները շափշփեցին»<sup>158</sup>: Էլ ավելի արտառոց է մայիսյան խոռվության ժամանակ հինգերորդ գնդի հրամանատար, ոռուսախոս գնդապետ Շալուբաթյանի<sup>159</sup> պահպաժը Կարսում: Նա այդ օրերին «հնարավոր համարեց պսակվելու և ուրախանալու...»: Ավելին, «Երբ խոռվարարները կարմիր ցնցոտի դրոշակներով անցնում

<sup>156</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 4, էջ 83:

<sup>157</sup> Տարօրինակ է, որ Ա. Վրացյանը դա բացատրում է սպայության՝ «զորքի ամբողջությունը փրկելու և ներքին կոփիների պատճառ շուալու» ազնիվ մղումներով (Ա. Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 422), մինչդեռ այդ սպայության դիրքորոշումը պայմանավորված էր մինչև ուղն ու ծուծը ապազգանությամբ և սեփական պետության նկատմամբ հավատքի պակասով կամ, առնվազն, արհամարհական մոտեցումով:

<sup>158</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 42: Ստեփան Ղորղանյանը բերում է հուշ կարևոր մի վկայություն: Երբ 1920 թ. գեկտեմբերի 2-րդում 3-ի գիշերը Ալեքսանդրապոլի համաձայնագիրը ստորագրած ՀՀ պատվիրակության երեք անդամները, նոր իշխանությունների պահանջով, դուրս էին գալիս արդեն խորհրդայնացած ՀՀ-ի սահմաններից, գիշերում են Ղարաբիլիսայում, ուր նրանց մոտենում է տեղի հեղկոմի անդամ մի երիտասարդ՝ Ղազանչյան ազգանունով և հայտնում, որ «մայիսյան Կարսի խոռվությունների կազմակերպիչներից մեկը ինքն էր» և թե «գեն. Փիրումով և գեն. Հովսեփյան անցել էին նոցա, խոռվարարների կողմը» (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 10, թթ. 44-45):

<sup>159</sup> Որոշ աղբյուրներում նրա ազգանունը նշվում է «Շահբուղալյան» ձևով:

էին գորանոցների մոտով, այդ նոր ամուսնացած գնդապետը, արտասուքը աշքերին, որպես մի սրբություն հարկավոր համարեց համբուրել իրանց այնչափ հարազատ այդ կարմիր ցնցոտին...»<sup>160</sup>: Եվ ի՞նչ, պատժվեց այս ուրացող և անպատճանատու սպան: Իհարկե ոչ: Եվ մենք հետագայում նրան տեսնում ենք Կարսի ուազմաճակատում, իր գնդի հետ «ամենաամոթ կերպով» փախչողների առաջին շարքում...<sup>161</sup>

Ամենուրեք «ապստամբությունը կատարվեցավ զորքի կողմե», որի պատճառով էլ «Բյուրո-կառավարությունը վստահություն շուներ կանոնավոր զորքին վրա»<sup>162</sup>: Նույն խոռվության պատճառով, «պետականության գաղափարը, որ առանց այն էլ ուժեղ չէր մեր նորաստեղծ ազգային բանակում, ավելի ևս թուլացավ»<sup>163</sup>:

Անպատճանատվության և անկարգապահության ցայտուն օրինակ է ՀՀ բանակի հոկտեմբերի 14-ի հարձակումը, որը նախատեսված էր արեածագին, սակայն «գնդապետների և շտաբների անհոգության պատճառով»<sup>164</sup> սկսում է որոշված ժամից երկու ժամ, իսկ Հարամ Վարդանի ամբությունների ուղղությամբ գործող թևում՝ 3.5 ժամ հետո, իսկ աջ թերի մի զորամաս «իր թնդանոթներով երեք ժամ հետո հասած էր իրեն համար որոշված վայրը»<sup>165</sup>:

Անպատճանատվության մեկ այլ ցայտուն օրինակ է խմբապետ Կնյազի արածը. ստանալով հրաման հետախուզելու ձախ թեր, նա «կես ճանապարհից վերադարձել էր հանգստացուցիչ հաղորդագրությամբ», հայտնելով թե այդ թերի վրա թշնամի շկա<sup>166</sup>:

Ահավասիկ անփութության ևս մեկ արտառոց օրինակ: Հոկտեմբերի 22-ին Սեպուհի բրիգադայի շտաբը հաստատվում է Կարսի նահանգի

<sup>160</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 18, թ. 21:

<sup>161</sup> Նույն տեղում:

<sup>162</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 46:

<sup>163</sup> Ս. Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 426:

<sup>164</sup> Արտաշես Բարձրական. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 57:

<sup>165</sup> ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 5, էջ 84:

<sup>166</sup> Արտաշես Բարձրական. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 61:

Իւաղինովկա մոլոկանների գյուղի մի բնակարանում, ուր ապրում էր մոլոկան մի պառավ իր թոռան հետ: «Մեր հեռագրատան ծառայողներն ընդհանուր առմամբ խոսում են ոռուերեն, գրությունների մեծ մասը նույն լեզվով է կատարվում և օ~, զարմանք, մոլոկան ընտանիքը նստած այստեղ լսում է ամեն բան»<sup>167</sup>: Եվ սա այն դեպքում, երբ մոլոկանների վերաբերմունքը դեպի ՀՀ-ը խիստ թշնամական էր:

Իսկ գլուխ գործոց հիմարություն է հետեւյալը. չորրորդ գնդի հրամանատար գնդապետ Դմիտրի Միրիմանյանի հանձնարարությամբ, սեպտեմբերի 13-լույս 14-ի գիշերը Կարառուգան կայարանում կայանում է հայ և թուրք սպաների միացյալ... խնջույք, որպեսզի «Հնարավոր ըլլար գոնե կոնյակի ազգեցության տակ տեղեկություններ կորցել տաճկական ներքին իրադարձություններուն մասին»: Կերուխումի ընթացքում հնչում են փոխադարձ «կեցցե»-ներ և «ուռուա»-ներ, «գնդապետ Միրիմանյանի ստորադասները հոգեկան ամենամեծ հաճուքով կոնյակի շիշերը կպարագեին որկրամոլ, այլ ծուղակե շրոնվող թուրք սպաներուն կենացը»: Եվ ի՞նչ: Թուրք սպաների մեկնումից քիչ անց, թուրք հետախուզները թափանցում են քեֆի կետը և կոտորում շատերին, իսկ մի քանի ժամ անց սկսվում է թուրքական «չնախատեսված», «անակնկալ» հարձակումը<sup>168</sup>, որին հետևում է հայկական նահանջը առանց լուրջ դիմադրության: Ամենից շուտ փախչում է գնդապետ Միրիմանյանը<sup>169</sup>... Ոչ ոք պատասխանատվության շի կանչվում այս այլանդակ վարքի համար:

Անպատասխանատվությունը համատարած է եղել նաև պետական ողջ վարչամեքենայում<sup>170</sup>:

<sup>167</sup> Անանուն, «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը», էջ 101:

<sup>168</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 83:

<sup>169</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 350: Տես նաև նույնը, թ. 352: Եվ ասել թե Միրիմանյանը քաջ և խիստ հրամանատարի համբավ է ունեցել... (Գարեգին արք. Հովհաննես, «Կյանքիս ամենադժբախտ օրը և երջանկությանս բոսեն», տես «Ոգուն շապավինելու արդյունքը», էջ 38):

<sup>170</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 12, թ. 77:

Հետևաբար, լիովին իրավացի է Կարսի երբեմնի նահանգապետը, երբ հաստատում է, որ «Կարսը ընկավ ոչ պարտված, նա զո՞յ դարձավ մեր ոճրագործ անհոգության»<sup>171</sup>:

#### Բ. 2. 4. Գասալիությունը

Սա ընդհանրապես բանակի մահացու հիվանդություններից է, հասարակության «ներքին թշնամին»<sup>172</sup>, որի դեմ պետք է պայքարել ամենայն խստությամբ: Դրան հակառակ, սակայն, դասալիքներն արժանանում էին իրենց հարազատների հոգածությանը, նրանց միջոցով ձևեր դժնում ծլկելու ուազմաճակատից, իսկ ճարպիկները և «ուժեղների» տղերքը ճողովրում էին Թիֆլիս: Ստ. Ղորղանյանը իրավացի է, երբ դասալքության պատճառները դիտարկում է «կառավարչական ամբողջ սիստեմի» համատեքստում<sup>173</sup>: Այդ պատճառների մեջ առաջնայիններից է եղել կողոպտելու մոլուցքը: Ստ. Ղորղանյանն իր հուշերում գրում է, որ ամեն տեղից, նույնիսկ Օլթիի ուղղությամբ շարժած զորամիավորումների հետ կապ չունեցող ամբողջ գնդեր դասալիք էին լինում՝ Օլթի երթալով թալանին մասնակցելու համար<sup>174</sup>:

Գործող բանակում դասալքությունը համարյա անշրջելի դարձավ հոկտեմբերի 14-ի հակահարձակման անհաջողությունից հետո: Դասալքության առաջն առնելու և հավանական դասալիքներին վախեցնելու համար, Կարսի հրապարակներից մեկում կախաղան է դրվում: Սակայն,

<sup>171</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 3, թ. 421:

<sup>172</sup> Թրակումը Գարեգին եպս. Հովսեփիանցինն է. տե՛ս նրա «Մեր թշնամիները» հրատարակված հոդվածը («Էջմիածին» շաբաթաթերթ, 4 հոկտեմբերի 1920, թ. 12, էջ 181-183) և նույնի «ներքին թշնամին» հոդվածը, գրված Ալեքսանդրապոլում (ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 93, թթ. 20-21) (հոդվածները տե՛ս «Ոգուն շապավինելու արդյունքը», էջ 75-80): Վերջինիս մեջ հեղինակը գրում է, թե «մեր աշքում տաճիկն ավելի բարձր է իբրև թշնամի, քան այդպիսի ներքին թշնամին՝ դասալիքը» («Ոգուն շապավինելու արդյունքը», էջ 78):

<sup>173</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 167:

<sup>174</sup> Նույն տեղում, թթ. 265-266:

դա էլ չի ազդում, քանի որ գեներալ Փիրումյանը ուազմական տրիբունալի նախագահ՝ է նշանակում իր փեսա, փոխգնդապետ Միրզուկին, որը 9-10 ամիս առաջ արատավորված էր ֆինանսական գեղծումների համար՝ յուրացրած լինելով իր գնդի գինվորներին հատկացված սննդի մի մասը: Այդպիսի դատավորի առկայությամբ, «այդ դատարան չէր, իհարկե, այդ մի նախատինք էր, մի ծաղր իրավակարգի, որ ... բնորոշում էր բարքերը և մեր ժամանակը...», - դառնությամբ արձանագրում է Կարսի երեմնի նահանգապետը իր հուշերում<sup>175</sup>:

Դասալբությունն աներևակայելի շափերի հասավ մանավանդ Կարսի անկման օրից սկսյալ: Բաբելոնյան խառնակություն էր տիրում<sup>176</sup>: Հազարավոր դասալիքներին ՀՀ իշխանությունները չեն պատժում: Ի տես այս խայտառակ իրավիճակի, ափերից դուրս ելած Սեպուհը անձամբ գնդակահարում է երկու դասալիքի, որոնցից մեկը բախտիքմահաճուքով ողջ է մնում<sup>177</sup>:

Դասալբությունը համակել էր նաև քաղաքացիական իշխանություններին: Իր հուշերում Շիրակի նահանգապետ Կարո Սասունին, անըմբոնելիորեն, արդարացնում է նման վարչելակերպը<sup>178</sup>: Նա Ալեքսանդրապոլի քաղաքապետ Պարույր Լևոնյանի հետ «թյուրքերի դեռ Ա-

<sup>175</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 375-380:

<sup>176</sup> Անանուն, «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը», էջ 109:

<sup>177</sup> Խոշն տեղում, էջ 110:

<sup>178</sup> Ներքին գործերի նախարար Խուբեն Տեր-Միհնայանը հեռագրով պահանջել էր, «որ թուրքերը քաղաքը գրավելու պարագային, իրենց պաշտոնի գլուխը պետք է մնան քաղաքագույքը, վարչության անդամները, շրջանային ինքնավարության նախագահը և վարչության անդամները. միայն նահանգապետը արտոնված էր հեռանալ քաղաքեն»: Այս հեռագիրը քննարկվում է Ալեքսանդրապոլում՝ նոյեմբերի 1-ի երեկոյան, «և այդ տեղ գտնված կառավարության անդամներն ու գործիչները գրեթե միաձայնությամբ որոշեցին, որ վերը հիշված պատասխանատու պաշտոնյաները իրավունք ունին հեռանալու, նկատի ունենալով թրքական բարբարոսությունները» (ՀԹՊ, 1926, թիվ 8, էջ 93): Սա ևս ասպացուց է այն բանի, թե ոչ միայն բանակում, այլև քաղաքացիական վարչամեքենայում կարգապահությունը գտնվել է շատ ցածր մակարդակի վրա:

խուրյան շհասած և առանց կառավարության թուլտվության, լքել են իրենց դիրքերը և հեռացելք<sup>179</sup>: Այդուհանդեմ, «արտակարգ դատարանը, յուր վերջին նիստում քննելով Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Պարույր Լևոնյանի ու վարչության անդամների պաշտոնակրման գործը[.] գտել է նրանց արդար»<sup>180</sup>:

Դասալիքների «արդարացումը» համընդհանուր երևոյթ էր, որն էլ ավելի էր անբարոյականացնում ընդհանուր հասարակական միջնորդութ:

#### Բ. 2. 5. Զհաշվարկված և անհարկի նահանջներով զորքի բարոյալֆումը

Պատերազմին անպատրաստ լինելու հետևանքներից մեկն էլ անիմաստ և ուազմական անհրաժեշտությունից չառաջացած նահանջների շարանն էր, որը կանգ առավ միայն սեպտեմբերի վերջին՝ Կարսի մատուցյներում: Այս ժամանակահատվածում, թուրքական զորքի հետ հայկական զորքը չունեցավ լուրջ ընդհարումներ: Այդ նահանջներն էլ ավելի բարոյալքեցին զորքը:

#### Բ. 2. 6. Հայկական և թուրքական կրնոհոգերանական և ազգմահոգերանական առանձնահատկությունների անտեսումը

Աս ուազմարվեստի կարեռագույն գործոններից մեկն է, որը հայկական կողմը հիմնովին անտեսել է հայ-թուրքական պատերազմում: Յարական բանակին սովոր ոռու և ոռուսախոս բարձրաստիճան հրամանատարները հայոց բանակի զինվորին վերաբերվել են իբրև ոռուների, մինչդեռ, պայմանավորված ազգային հատկանիշներով, հայ և ոռու զինվորներն ունեն որոշակի տարբերություններ: Ընդհանուր վերցրած, հայ

<sup>179</sup> «Ժողովուրդ» թերթ, օրգան Հայ ժողովրդական կուսակցության, Երևան, թիվ 182, 1920 թ., 9 նոյեմբերի, էջ 2, «Քրոնիկոն» սյունակը:

<sup>180</sup> «Ժողովուրդ», թիվ 192, 1920 թ., 24 նոյեմբերի, «Քրոնիկոն» սյունակը, ենթավերնագիր՝ «Պարույր Լևոնյանի արդարացումը»:

գինվորը հարձակման ժամանակ համարձակ է և թշնամու ուժն արհամարհող: Մեկ այլ հատկանիշ (որը նկատի է ունեցել գեներալ Սիլիկանը, բայց դրա հետ հաշվի չեն նստել), այն է, որ հայ զինվորին, մարտական գործողությունների ժամանակ, եթե ստիպում են սպասել (մանավանդ անհարկի կամ շտրամաբանված), նա «շուտով կորովազուրկ» է լինում<sup>181</sup>:

#### Գ. Կարսի անկման բարոյահոգեբանական պատճառները

Այս բաժնում բերվող պատճառներն ու կատարվող դատողությունները ճիշտ են ոչ միայն ՀՀ բանակի, այլև ՀՀ պետական վարչամեքենայի և պետության հայագիտ հասարակության համար:

Առանձնապես կանգ չենք առնելու հայկական բանակում և ընդհանուր վերցրած՝ Հայաստանի առաջին հանրապետությունում բոլշևիկյան քարոզության ավերիչ ազգեցության վրա: Այդ մասին շափագանց շատ է գրպել:

Մեր կարծիքով, բոլշևիկյան քարոզությունը (իր հիմնական երկու ազգակործան բաղադրիչներով՝ հայոց միակ փրկությունը Խորհրդային Ռուսաստանին կցվելու և թուրքերին ու աղբբեշանցիներին «եղբայր» ձևանձելու գրություններով) չէր կարող հաղթել հայկական հասարակությանը, եթե նրա մարմինն ունենար մեծ դիմադրառականություն ու վարակված լիներ բարոյական և հոգեբանական բազմաթիվ ախտերով, որոնցից կարևորագույնները նշում ենք ստորև:

#### Գ. 1. Կովելու և հաղթելու կամքի բացակայությունը և նույնի՝ թշնամու մոտ գերազանցությունը

Այս հույժ կարևոր գործոնը նշում են բոլոր հուշագրողներն ու փաստաթղթերի հեղինակները՝ առանց բացառության, թեև յուրաքանչյուրը դա կատարում է տարբեր ուժքնությամբ: Ոչ միայն ՀՀ բանակը, այլև հայությունն ընդհանրապես «կովիլ շուկելու և շտոկալու հիվանդությամբ

<sup>181</sup> ՀՅԴ, «Հայոց հայություն», 1926, թ. 6, էջ 83:

մը վարակված» էր<sup>182</sup>, մինչդեռ «բարոյական ուժը կամ կորովը գլխավորագուն գենքն է զորքին, կովի դաշտին վրա հաղթական ըլլալու համար»<sup>183</sup>: «Հայ զորքը վտանգին սերը չէր ճաշակած»<sup>184</sup>, «Հայ զեկավարները Սպարտայի վարդապետությունը լսեր էին, առանց, սակայն, անոր հոգեբանությանը թափանցելու»<sup>185</sup>: Հայ զինվորը չէր հաղթել մահվան վախր: Գերագուն զորահրամանատար, գեներալ նազարեգյանը «Լավատեսներեն չէր Հայաստանի ապագայի մասին»<sup>186</sup>: Սիլիկյանի շտաբի պետ գնդապետ Վերիլյանը խոստովանում էր, թե «Հայ զինվորականությունը հավատք չուներ թուրքերը հաղթելու»<sup>187</sup>: Ինչպես ունենար, եթե տևաբար ալան-թալանով վարակված լինելով, «նա ինքն էլ կորցրել էր իր հավատը դեպի իր կարողությունը»<sup>188</sup>: Խակ Հարամ Վարդանի ամրությունների պաշտպանության հրամանատար, գնդապետ Փերվերդիկ իր զորամասերին օրերով բացատրում էր, թե «ինչ ճանապարհներով պետք է հեռանալ, փախչել, երբ թշնամին գալու լինի...»: Կարսի նահանգապետն այդ մասին տեղեկացնում է Փիրումյանին, որը քննություն կատարելով, պարզում է, թե «Փերվերդիկ արբած էր, նա հայտնի արբեցող է և ես նորան մի երկու օրով պատվիրեցի բանտարկել...»<sup>189</sup>:

Կովելու կամքի բացակայության առումով ուշագրավ է Սեպուհի ձեռքը գերի ընկած մի թուրք վաշտապետի խոստովանությունը, թե թուրքական հրամանատարության՝ իր հաղթանակի նկատմամբ հավատքի հիմքերից էր այն, որ «ձեր զորքը ո՛չ թե չէր կրնար դիմանալ մեզ, այլ՝

<sup>182</sup> ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 29 հոկտեմբերի, էջ 2:

<sup>183</sup> Նույն տեղում, 1932 թ., 1 նոյեմբերի, էջ 2:

<sup>184</sup> Նույն տեղում, 1932 թ., 8 նոյեմբերի, էջ 1:

<sup>185</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 90:

<sup>186</sup> Նույն տեղում, էջ 380:

<sup>187</sup> Նույն տեղում, էջ 33:

<sup>188</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 306:

<sup>189</sup> Նույն տեղում, մաս 3, թ. 370: ՀՀ բարձրաստիճան սպաների զգալի տոկոսն աշքի էր ընկնումնակ հարբեցողությամբ, այս սովորությը «վաստակած» լինելով ցարական բանակում:

պիտի չկռվեր մեր դեմ»<sup>190</sup>: Այսինքն, թուրքերը հայ զինվորի մարտական կարողությունները չէին թերագնահատում, սակայն լավատեղյակ լինելով երկրում ու հատկապես բանակում տիրող բարոյահոգերանական վիճակին, պահը հարմար էին համարում ծնկի բերելու հայությանը: Կարարեքիրը իր հուշերում շատ է գրում այն մասին, թե իրեն չափազանց դժվար եղավ համոզել միլի շարժման զեկավարությանը (որը կենացմանու կոիվ էր մղում Փոքր Ասիայի ափ ելած ու գետի Անատոլիայի խորքերն առաջացող հունական բանակի դեմ և խիստ կարիքն ուներ Կարարեքիրի տրամադրության տակ գտնվող զինուժին և ռազմամթերքին): «Համար պատերազմն սկսելու ճիշտ պահի հարցում: Մարտական ոգի կոչվող բարոյահոգերանական հզոր զենքը նա հիանալիորեն գործածեց: Կարսի անկման նախորդ օրը՝ իսլամական ուրբաթին, նա դիմել է կիսամերկ ու թերասնված իր զորքին<sup>191</sup> և ցուց տալով Կարսը, նրանց խոստացել է քաղաքի գրավման դեպքում նրանց թողնել քաղաքի հայ բնակիչների սնունդն ու հանդերձանքը:

Պարտվողական հոգեբանությամբ վարակված էր ոչ միայն բանակը, այլև ողջ հասարակությունը: «Հոկտեմբերի առաջին օրերին» Կարս ուղեկորված Գարեգին եպս. Հովսեփյանցը գիշերը հասած լինելով քաղաքի երկաթուղու կայարանը, այնտեղ ծանոթանում է «ժողովրդական կարծիքների և ձնշված տրամադրության հետ: Երկմտության և մասսամբ հուսալքության ոգին փոել էր յուր թևերը ժողովրդի բացասական հոգեբանության վրա: Ոմանք չէին քաշվում ասելու, թե այս պատերազմը պիտի վերջանա մեր պարտությամբ»<sup>192</sup>: Նույն հուշագրողը քիչ անդին

<sup>190</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 291:

<sup>191</sup> Բոլոր հուշագրողները հաստատում են Կարս մտած թուրք ասկարների և քուրդ բաշիրովուկների այս վիճակը: Նրանց առաջին գործն է եղել, կոտորածն սկսելուց առաջ, մերկացնել հայերին և նրանց հագուստը հագնել:

<sup>192</sup> Գարեգին արք. Հովսեփյանց, «Կյանքիս ամենադժբախտ օրը և երջանկությանս բոպեն», «Ոգուն շապավինելու արդյունքը», էջ 28: Ժողովրդի և բանակի պարտվողական հոգեբանությամբ վարակված լինելու մասին տե՛ս նաև նույնը, էջ 37-39; ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 5, էջ 83:

դառնությամբ արձանագրում է. «Ազգերի պատմության մեջ դժվար է գտնել այնպիսի խայտառակ պարտություն, ինչպես մերն էր այդ օրերին: Միայն թաթարների արշավանքների ժամանակ պատահել են այսպիսի անհասկանալի երևույթներ, ընդդիմության կատարյալ բացակայություն թշնամու գեմ»<sup>193</sup>: Անկման օրը Կարսում գտնված և գերի ընկած նախարար Արտաշես Բաբայանն էլ նույն է վկայում. «Դիմադրություն շեղավ. վիրավորներ և սպաննվածներ (հայկական, - Գ. Յ.) զորքից չկային: Տաճիկներից վիրավորված էին հինգ ասկյար միայն»<sup>194</sup>: Մինչև 30 հոկտեմբերի ուշ երեկոն, թուրքական մի գումարտակ և քուրդ ձիավորներն են գրավված պահել քաղաքը<sup>195</sup>: Ժողովրդի հոգեկան դրությունը հայտարարելով «անկայուն», Ա. Վրացյանը հայտնում է, որ նա «իրեն սպառնացող ահավոր վտանգի դիմաց անկարող եղավ բավարար կամք և վճռականություն ցուց տալ»<sup>196</sup>:

Շատ դիպուկ է Հայ Գնդունու հաստատումը. «Իրենց կոչումին բարձրությունը շգփառող մեր մտավորականներն ու գլուխները՝ հայկական բանակին ուազմական դիրքերու վրա կրած պարտութենեն առաջ, այո՛, սաղմնավորեր և պատրաստեր էին Կարսի անկումն ու գրավումը: Ուրիշ խոսքով, Կարսը, հայկ. թիկունքին մեջ հոկտ. 30-են ավելի կանուխ ինկած էր անարժան և դաշտաճան զեկավարներուն ձեռքով»<sup>197</sup>:

Գ. 2. Զինվորական բարձրագույն հրամանատարության և  
պաշտպանության նախարարության մեջ անմիաբանությունը,  
նախանձը և միմյանց նկատմամբ դավերը

Վերևում արդեն գրել ենք Սեպուհ-զորահրամանատարներ հակամարտության մասին: Սեպուհի «հետ էին հայրենասեր սպայության և զորքին

<sup>193</sup> Գարեգին արք. Հովսեակյանց, «Կյանքիս ամենադժբախտ օրը և երջանկության բոպեն», «Ոգուն շապավինելու արդյունքը», էջ 41:

<sup>194</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 62:

<sup>195</sup> Նույն տեղում:

<sup>196</sup> Սիմոն Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 521:

<sup>197</sup> ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 10 նոյեմբերի, էջ 2. հաստագրումը մերն է,- Գ. Յ.:

սիրտն ու հոգին»<sup>198</sup>, մինչդեռ ուսաղրավոր գեներալների ու գնդապետների համար նա «խորթ զավակ» էր<sup>199</sup>, «աշքի փուշ». վերջիններս նրան, Դրոյին, Անդրանիկին և նման հայդուկներին արհամարհանքով «խմբապետ» էին կոչում<sup>200</sup>, որոնց գոյությունը, իրենց համոզմամբ, «անհամապատասխան [էր] արդիական պետության մը կենսական շահերուն և պահանջներուն, զայն կհամարեր տեսակ մը դիտմամբ ստեղծված հակադիր ուժ գինվորականությանը»<sup>201</sup>: Սեպուհը, իր կարգին, վստահություն չուներ գորահրամանատարների վրա<sup>202</sup>: Գեներալներն ու գնդապետները անընդհատ դավեր էին նյութում Սեպուհի դեմ՝ աշխատելով որքան հնարավոր է նրան հեռու պահել ուազմական գործողությունների բեմից: Փիրումյան-Սեպուհ անհամաձայնությունը «մեկ կողմե՞ք բնական զարգացումն էր» Փիրումյան-նահնգապետ Ղորղանյան հակամարտությանը, «և մյուս կողմե՞ք անուրանալի փաստն այն անհամերաշխությանը, որ սկիզբեն ի վեր գոյություն ուներ մեր կամավոր ուազմիկներուն և սպայությանը միջև»<sup>203</sup>: Սեպուհի նկատմամբ այս անհար-

<sup>198</sup> Նոյն տեղում, 1932 թ., 5 նոյեմբերի, էջ 2:

<sup>199</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թ. 66:

<sup>200</sup> Բացի զինվորական ակադեմական կրթություն ունենալու կամ չունենալու հանգամանքից, այս արհամարհանքն ունի նաև հոգեբանական բացատրություն: Այս հայդուկներն ազգային-սպատագրական պայքարի ֆիդայական շրջանում դարձել էին ազգային խորհրդանիշ, իսկ ապագային հրամանատարները, հոգեբանական նույնացում չունենալով հայ ազգի հետ, միևնույն ժամանակ ժիստում էին կամ առնվազն արհամարհում որպես հայ ազգի խորհրդանիշ ընկալվող ամեն բան (լեզու, պետություն և պետական խորհրդանիշներ Հիմներդ, բանակ, ևն.), անձեր և այլն): Ազգային խորհրդանիշներն անձնական և ազգային «հոգեբանական խտացումներ են» (Ալբերտ Նալշաշյան, «Էթնիկական հոգեբանություն», էջ 173), իսկ գորահրամանատարների մեծ մասի հոգեբանական խտացումը ուստական էր:

<sup>201</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 379: Սեպուհ-բարձրաստիճան զինվորականներ հակամարտության մասին հավելված տես ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թ. 70; մաս 3, թ. 338; ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 5, էջ 82: Անանուն, «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը», էջ 96:

<sup>202</sup> Անանուն, «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը», էջ 94:

<sup>203</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 149:

գալից մոտեցումը բարոյազրկում էր ժողովրդին, որը Սեպուհին ազգային հերռու էր համարում:

Թալանի բաժանման հարցում և այլ խնդիրներում անհամաձայնությունների պատճառով, գեներալներ Փիրումյանի և Հովսեփյանի հարաբերությունները լավ չէին<sup>204</sup>: Վերջինս «աններելի շափով» ատում և դավեր էր լարում իր անմիջական ստորագրասներից, չորրորդ գնդի հրամանատար գնդապետ Միքայել Միքայելյանի<sup>205</sup>, ինչպես նաև կռվում էր գնդապետ Հարությունյանի հետ<sup>206</sup>. առաջին գնդի այս հրամանատարի նկատմամբ գեներալները տհաճ զգացմունքներ էին տածում և «նորան միշտ կարսում էին պահում»<sup>207</sup>: Փիրումյանին Կարսի բերդապետ նշանակելիս զորաց նախարարի օգնական գեներալ Սիլիկյանը բողոքում է և ընդհարվում իր վերադասների, նախարար գեներալ Արարատյանի և սպարապետ նազարբեկյանի հետ: Փիրումյանն «ուստագնացություն է կատարում երևան, դեպի Աստղերի պալատը»<sup>208</sup>, «ընկերական շրջանները» և դրությունը դյութիչ ձեռվ փոխվում է» ու նա մնում է իր նոր պաշտո-

<sup>204</sup> Սիմոն Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 508:

<sup>205</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 90: Հատկանշական է գլխավոր հրամանատար նազարբեկյանի խոստովանությունը, որ գեներալներ Հովսեփյանն ու Փիրումյանը միշնորդում էին Միքայելյանին՝ «այդ երկշուր և անպետք սպային ... գեներալի աստիճան տալու: Երբ հանդիմանեցի դորա համար գեներալ Հովսեփյանին, վերջինս խոստովանվեց, որ իրանք ուզում էին գեթ այդ միջոցով ազատվել այդ գնդապետից...» (ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 7, մաս 3, թ. 353):

<sup>206</sup> ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 6, թ. 22:

<sup>207</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 2, թ. 267:

<sup>208</sup> Ստեփան Ղորղանյանն իր հուշագրության մեջ հաճախ է հիշատակում Երևանում գտնվող «Աստղերի պալատը», «այդ աներևույթ ուժը», որ «անջատ կառավարությունից և պարլամենտից, անօրինում էր երկրի բախստը» (նույն տեղում): Մեր կարծիքով, նա նկատի ունի մասոնական կազմակերպությունը: Հետագայում, վտարանդիության մեջ, ՀՀ կառավարության անդամներից մի քանիսը կարեոր պաշտոններ են զբաղեցնում մասոնական օթյակներում (Ալ. Խատիսյանը՝ շոտլանդական ծեսի 33-րդ աստիճանի Մեծ վարպետ, Ա. Վրացյանը՝ 18-րդ աստիճանի մասոն ևն.):

նում<sup>209</sup>: Իր հերթին, գեներալ Փիրումյան, նրա շտաբի պետ գնդապետ Տեր-Առաքելյան և շտաբի ավագ սպա փոխգնդապետ Ավագրով «շարունակ կռվում էին իրար հետ, հայհոյում իրար...»<sup>210</sup>: Փիրումյան և Կարսի ամրությունների հրետանու պետ գնդապետ Բաբաջանյանով «իրարու տակ փորելու և իրարու տապալելու» հարցում մրցում էին<sup>211</sup>: Գեներալների և գնդապետների մեծ մասը, ավարի բաժանման (տես ստորև) հարցերում անընդհատ տարակարծություններ ունենալով, միշտ իրար էին ամբաստանում և իրար հայհոյում<sup>212</sup>: Հոկտեմբերի 28-ին գեներալ Հովսեփյանին փոխարինած գեներալ Ղազարյանի գալուստը Փիրումյանը տհաճությամբ է ընդունում<sup>213</sup>: Ղազարյանը երբ մեկնում է Հովսեփյանի կայանը, այնտեղ ուազմական քարտեզ չի գտնում՝ ապացուցը իրենց գործի նկատմամբ սպաների համատարած անփութության և անպատճախանատվության (այս մասին գրել ենք անկման ուազմական պատճառների բաժնում): Այս փաստն արձանագրող Ստ. Ղորղանյանը հայտնում է, որ Ղազարյանն «առանց այդ ուազմական քարտեզի, ինքը նապոլեոն (էլ լիներ՝ գ. 3.)՝ոչինչչեր կարող անել»<sup>214</sup>:

<sup>209</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 392-393:

<sup>210</sup> Նույն տեղում, գ. 6, թ. 22: Արժե նշել, թե Կահան Տեր-Առաքելյանը ժամանակին եղել է Կոմիտաս վարդապետի աշակերող Մայր աթոռ ու Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և, հավանաբար, հոգևորական դառնար՝ եթե Առաջին համաշխարհային պատերազմը շրոնկվեր:

<sup>211</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 3, թ. 430:

<sup>212</sup> Նույն տեղում, գ. 6, թ. 22-24:

<sup>213</sup> Դրա պատճառը այն էր, որ բարձրաստիճան զինվորականության կողոպուտի մասին նահանգապետի բողոքագրերի իսկությունը ստուգելու համար, զորաց նախարար, գեներալ Արարատյանը 1919-ին որպես քննիչ Կարս էր ուղարկել Ղազարյանին, որը հաստատել էր բողոքների հավաստիությունը (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թթ. 67-68), թեև «ոչ ոք այդ թալանի հերոսներից դատի շարպեց և բոլորը մնացին իրանց տեղերում» (Նույնը, մաս 2, թ. 291):

<sup>214</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 32:

«Սպաների և զինվորների փոխհարաբերությունը շատ մասերում մտերմական չէր»<sup>215</sup>. ինչպես լիներ, եթե «հրամանատար կազմը շահագործում էր» մեր շարքային զինվորությունն իր անձնական օգուտների համար: Այդ մինորությունը հասարակ զինվորը չէր կարող պետական դաստիարակություն ստանալ, նա տեսնում էր մեծերի օրինակը և իրան էլ, ի՞նչ արկե, չէր մոռանում... Այդ առանցքում խոսք չէր կարող լինել զինվորական կորովի, գաղափարի մասին: Պետականությունը, հայրենիքը, ազգային պատվախնդրությունը, արդեն խորթացած, երանավոր ուրվականներ էին»<sup>216</sup>: Մի խոսքով, ՀՀ բանակում տիրում էին ոռուսական բանակից ժառանգված «դեռովշինայի» այլանդակ բարփերը:

**Գ. 3. Կարսի նահանգի քաղաքացիական և ռազմական իշխանությունների միջև թշնամանքի հասնող հակամարտությունը**

Սա ևս նշում են բոլոր հուշագիրները<sup>217</sup>: Մի կողմից Կարսի նահանգապետ Ստեփան Ղորդանյանի և մյուս կողմից բերդապետ, գեներալ Դանիել-բեգ Փիրումյանի, կենտրոնական հատվածի հրամանատար, գեներալ Արտյոմ Հովսեփյանի ու նրանց ենթակա գնդապետների միջև հարաբերությունները ծայր աստիճան լարված էին: Փաստուեն, նահանգում տիրում էր երկիշխանություն: Այս հակամարտությունն ուներ բազմաթիվ պատճառներ, որոնցից գլխավորներն են ալան-թալանի նկատմամբ գեներալների ու նրանց ենթակաների մեծ ախորժակն ու դրան՝ նահանգապետի խիստ հակառակությունը, և, երկրորդ, նահանգի մուսուլման (թուրք, քուրդ, կարափափախ և այլն):

<sup>215</sup> Սիմոն Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 508:

<sup>216</sup> ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թիվ 304-305:

<sup>217</sup> Տե՛ս, օրինակ Սիմոն Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 508; Գարեգին արք. Հովսեփյանց, «Կյանքիս ամենադժբախտ օրը և երշանկությանս բոպեն», «Խորու շապավինելու արդյունքը», էջ 34; Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 59; Սո. Ղորդանյանի հուշագրությունն ամբողջությամբ (ՀԱԱ, ֆ. 477):

բնակչության նկատմամբ վարվելիք քաղաքականության տրամադծորեն հակառակ լինելը զինվորականների և նահանգապետի մոտ: Նահանգապետը վարում էր այլազգիներին, մասնավորաբար քրգերին սիրաշահելու քաղաքականություն, մինչդեռ գեներալները, կողմնակից լինելով այլազգիների նկատմամբ կոշտ քաղաքականությանը<sup>218</sup>, իրականում հետապնդում էին մուսուլմաններին ալան-թալանելով հարստանալու ապառողջ նպատակներ: Փիրումյանը պահանջում էր իրեն նշանակել գեներալնահանգապետ և իրեն ենթարկել քաղաքացիական վարչությունը, մի բան, որին բացարձակապես դեմ էր նահանգապետ Ղորղանյանը<sup>219</sup>: Զինվորականների գործողությունների պատճառով, նահանգում թագավորում էին կամայականություններն ու բռնությունները: ՀՀ կառավարությունը, փոխանակ ալեքսանդ-

<sup>218</sup> Ալեքսանդր Խատիսյան, «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը», «Հայրենիք», 1925, թիվ 6, էջ 50-51: Մեր կարծիքով, Կարսի անկման և առաջին հանրապետության կործանման քաղաքական պատճառների շարքում երկրորդական դեր ջի խաղացել հանրապետության՝ իր ազգային փոքրամասնությունների նկատմամբ հստակ քաղաքականություն շռնենալու փաստը: Դրանից օգտվել են ամեն տեսակի պատճենապահությունները: Օրինակ՝ Կարսի գեներալները նահանգի հովաներից կազմել էին կամավորական խմբեր, որոնք «մասնագիտացել էին» թուրքական և քրդական գյուղերի թալանման գործում (տես, օրինակ, ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թի. 456-458), մի հանգամանք, որն իր բացասական դերն ունեցավ նահանգում ազգամիջան հարաբերությունները սրելու հարցում: Այս խնդրին ավելի մանրամասն անդրադարձել ենք մեր «Հայք-քրդական հարաբերությունները Կարսի նահանգում 1919-1920 թվականներին» ուսումնասիրության մեջ («Մերձավոր Արևելք - Պատմություն, քաղաքականություն, մշակույթ» (հոդվածների ժողովածու)», ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2002, էջ 158-169):

<sup>219</sup> Ալեքսանդր Խատիսյան, «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը», «Հայրենիք», 1925, թիվ 6, էջ 51: Նահանգում 1919 թ. մայիսին հայկական գերիշխանության հաստատումից անմիջապես հետո, շատ փոքր ժամանակահատված, նահանգում հաստատվել է զինվորական իշխանություն և գեներալ Արտյոմ Հովսեփյանը նշանակվել է գեներալնահանգապետ (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 230): Հովսեփյանը Ղորղանյան հակամարտության պատճառներից մեկն էլ դա էր (նույն տեղում):

րյան ոճով լուծելու կարսի նահանգում իշխանության երկվության այս գորդյան հանգուցը, բավարարվում էր լսելով երկու կողմերին և... բարձիթողի մատնելով հարցի վճռումը:

Դեներալներ-կարսի նահանգապետ հակամարտությունն ուղեկցվում էր երկկողմանի դավերով և նահանգում անիշխանության խորացմամբ: Այս հակամարտությանը մասնակցում էր նահանգի ՀՅԴ կառույցը, որի անդամների մի մասը նահանգապետի կողմն էր, մյուսը՝ գեներալների: Այս կուսակցականներն ու զինվորականները, դուրս գալով իրենց իրավասություններից, խառնվում էին նահանգի և առհասարակ ՀՀ-ի քաղաքացիական, վարչական, տնտեսական ու կադրային գործերին, ինչի գեմ նահանգապետն անընդհատ բողոքում էր<sup>220</sup>: Այս հակամարտությունը, իր ծանր հետեանքներով, շարունակվեց նույնիսկ պատերազմական գործողությունների ամբողջ ժամանակահատվածում<sup>221</sup> ու ճակատագրական և աղետաբեր եղավ թե՛ քաղաքի հայության, և թե՛ առհասարակ հայ ժողովրդի ու հայկական պետականության համար<sup>222</sup>:

#### Գ. 4. Քաղաքական ու հատկապես ռազմական պատկառազդու առաջնորդ-հրամանատար(ներ)ի բացակայությունը

Հայ զինվորականության շրջանում պատկառանք չէր առաջացնում գեներալ նազարբեգյանի անձը: Նա, «նորաստեղծ Հայաստանի պահանջներուն բավարարություն տվող մարդը չէր»<sup>223</sup>, նա «ավելի շոյող ֆիկցիա էր, քան թե ցանկալի իրականություն - գեներալ նազարբեգով

<sup>220</sup> ՀԱԱ, գ. 477, ց. 1, գ. 14, թթ. 1-2; նույնը, գ. 7, մաս 3, թ. 394-396:

<sup>221</sup> Գարեգին արք. Հովսեփյանց, «Կյանքիս ամենադժբախտ օրը և երջանկությանս բռպեն», «Ոգոն շապավինելու արդյունքը», էջ 34; Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 59:

<sup>222</sup> Ալեքսանդր Խատիսյան, «Հայաստանի Հանրապետության ծագումն ու գարգացումը», «Հայրենիք», 1925, թիվ 6, էջ 51; Արարատ Հակոբյան, «Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920», Երևան, 2005, էջ 274:

<sup>223</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 381:

թագավորում էր, բայց ոչ կառավարում»<sup>224</sup>: «Մեզ պակասում էր մի իշխանալից հրամանատար միայն և հայ քաջերը պատրաստ կլինեին կրակը նետվելու», և այդ զորահրամանատարի սրի հետևից «հայկական բանակն անձնուրաց կերթար»<sup>225</sup>:

**Աղա** գործոնի առնչությամբ Հայ Գնդունին խոր վրովումով գրում է. «Քանի մը տասնյակ վարժապետներ և ասոնց մեջ ամենեն ավելի ճարպիկները», դավադիրները, սուտ հերոսներն ու կեղծ հեղափոխականները կկարծեին նախարար, վարչապետ, մեծամեծ ժողովներու նախագահներ եղած ըլլալը: Նրանք շգիտեին և, ավելի դատապարտելին, չէին էլ ուզում սովորել «այն բոլոր բաները, որոնք անհրաժեշտ էին, անխուսափելի էին երկիր և ժողովուրդ կառավարելու համար»<sup>226</sup>: Զկային «ոտքի կանգնած բազմությունն օգտագործող, կամքերը կոռող-կոփող վայրկանի զեկավարները»<sup>227</sup>, հրապարակում երևացող զորահրամանատարները «ոչ մի բարոյական հեղինակություն չեւին ներկայացնում հայ զինվորի աշքում»<sup>228</sup>: Պատերազմում և խաղաղության մեջ հաղթելու համար, հայ ժողովուրդը կարիքն ուներ, և այսօր ևս ունի, համազգային միասնության, իսկապես՝ հայրենասեր, հեռատես, գաղափարապաշտ և պատկառագության բաղադրական ու զինվորական առաջնորդների:

Ոչ միայն բանակի անձնակազմը, այլև հասարակ ժողովուրդը չէր հավատում իր զորահրամանատարների կարողություններին ու հարգանքը չուներ նրանց նկատմամբ<sup>229</sup>:

Իսկ Հայաստանի Հանրապետության դեմ արշավող թուրքական բանակն ուներ քաղաքական ու զինվորական մեկ զեկավար՝ 38 տարեկան, ուազմական ակադեմիական գերմանական բարձրագույն կրթու-

<sup>224</sup> ՀԱՅ, ֆ. 477, գ. 1, գ. 16, թ. 41:

<sup>225</sup> Նույն տեղում, գ. 6, թ. 82: Տես նաև նույնը, գ. 7, մաս 3, թ. 357:

<sup>226</sup> ԿԱՊ, «Մարտկոց», 10 նոյեմբեր 1932, էջ 2:

<sup>227</sup> ՀՅԹ, «Հայրենիք», 1926, թ. 6, էջ 97:

<sup>228</sup> ՀԱՅ, ֆ. 477, գ. 1, գ. 6, թ. 252:

<sup>229</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 3, թ. 381:

թյուն (որը հատկանշվում է կարգապահության նկատմամբ խստագույն մոտեցումով) ստացած, Առաջին աշխարհամարտին մեծ փորձառություն ձեռք բերած, «ընդունակ և լուրջ զորավար»<sup>230</sup>, պատկառազդու մեկ անձ՝ Քյազիմ Կարաբեքիր փաշան, որն իր անձի մեջ միավորում էր կարևոր որակներ՝ քաղաքագետն ու դիվանագետը, ուսկմական գործիչն ու թուրքական ազգային գաղափարախոսության՝ համաթուրքականության գաղափարակիրն ու դրա անձնական վառ օրինակը:

Առաջնորդի անձնական օրինակը խիստ վարակիչ է դառնում մասնավորաբար արտակարգ իրավիճակներում, ինչպիսին է պատերազմը: Մինչ Կարաբեքիր անձնապես էր առաջնորդում իր զորքերը և հեռադիտակը ձեռքին հետևում էր ուսազմական գործողություններին, տեղում օպերատիվ կարգով որոշումներ ընդունում ու հրամաններ արձակում, հայոց բանակի հրամանատարությունը նստում էր փափուկ բարձերի վրա՝ երեանում, Ալեքսանդրապոլում կամ Կարսի ձորում գտնվող շտաբի շենքում (որտեղից «երկնքի մի կտոր տեսնելու հնարավորություն ուներ միայն»<sup>231</sup>) և ոչ թե քաղաքին իշխող Կարագաղի ամրություններում, որտեղից հեռադիտակով կարելի էր հետևել գործողություններին<sup>232</sup>: Փիրումյանը «շատ քիչ անգամ Կարսեն դուրս եկավ իրեն հանձնված շրջանին և դիրքերուն ու ամրություններուն ծանոթանալու»<sup>233</sup>: Ճակատա-

<sup>230</sup> Նույն տեղում, գ. 17, թ. 22:

<sup>231</sup> Արտաշես Բարյալյան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 68:

<sup>232</sup> Այս մասին տե՛ս, օրինակ, Արտաշես Բարյալյան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 68; ԿԱՊ. «Մարտկոց», 1932 թ., 8 նոյեմբերի, էջ 2: ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 7, մաս 3, թ. 368: Աւշագրավ է այն փաստը, որ արդեն գերության մեջ, երբ Կարաբեքիրի շտաբի պետ Խալիլ բեյը հարց է տալիս Սիլիկանի շտաբի պետ Վերիլանին, «թե ո՞ր դիրքերից էիր դուք, գեներալ Փիրումովի հետ, վերջին օրերը, դիտում ուսպանքեմը», նա պատասխանել է՝ «Կարսի ամրությունների վերայ»-ից: «Մենք Կարաբեքիր փաշայի հետ այդպես էլ կարծում էինք», - հետևել է թուրք գնդապետը (ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 7, մաս 3, թ. 368):

<sup>233</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 383: Նույն հաստատում է նաև Ստ. Ղորղանյանը: Հետևաբար, հիմնագուրկ է պատմաբան Հարություն Թուրշանի (1900-1978)

գրական այդ օրերին նա ավտովթարի հետևանքով կոտրել էր ուսքն ու պառկում էր շտաբի շենքում:

**Գ. 5. Ալան-թալանի մոլուցքը ՀՅ քաղաքական ղեկավարության և բանակի՝ Կարսի նահանգում գտնվող գորամիավորների և մառզերիստների մոտ**

Այս մասին հարյուրավոր վկայություններ կան բոլոր հուշագրողների մոտ, ինչպես նաև արխիվային փաստաթղթերում: Թալանի հարցում իր անձը վարկաբեկել էր գեներալ Դանիել-բեգ Փիրումյանը: Այս ոլորտում հատկապես «փայլում էր» գեներալ Արտյոմ Հովսեփյանը, որը պատերազմական գործողությունների օրերին ավելի շատ զբաղված էր իր թալանածներն ապահով տեղ հասցնելու հարցով, քան զորամիավորումների հրամանատարությամբ<sup>234</sup>: Իր վկայությունը վերագրելով ժողովրդին, Գարեգին արք. հայտնում է, որ «նորան «թալանչի» և «անասունների վաճառական» էին անվանում, որ թուրք և քուրդ տարրերից հափշտակելով նրանց անասունները, որպես խոռվարարներին պատժելու պատրակով, վաճառում էր Վրաստանի վերա»: «Հարկավոր չէ բացատրել, թե ինչ ներգործություն պիտի ունենային շարքային զինվորների

կարծիքը, որ Փիրումյանը «այն զինվորականներից չէր, որոնք ապահով հեռավորությունից են զեկավարում կոիվը: Դանիել-բեգն անմիջապես մեկնում է կրակի առաջին գիծը, սակայն ավտոմոբիլային աղետ է տեղի ունենում, որի հետևանքով կոտրվում է նրա ոտքը» (*Հարություն Թուրչան, «Սարդարապատի հերոսը (Դանիել-բեգ Փիրումյան) (1863-1922)», «Բանքեր Հայաստանի արխիվների», 1969, թիվ 1, էջ 179*): Զիստելով հանդերձ Դ. Փիրումյանի խևապես մեծ ու հերոսական գերակատարությունը Սարդարապատի ճակատամարտում, ցավոք, հաստատում ենք, որ նա տիպիկ օրինակն է այն հերոսի, որը չգիմանալով գայթակղություններին, հեշտությամբ ընտրում է անպատասխանատվության և անբարյականության ուղին և այդ ճանապարհով ընթանում դեպի սեփական անձի կործանում: Այստեղ արժեք հիշել նժդեհի իմաստուն միտքը. «Կյանքում դժվար է հերոսանալը, բայց ավելի դժվար է հերոս մնալը, իսկ էլ ավելի դժվար՝ հերոս մեռնելը»:

<sup>234</sup> Այս մասին տե՛ս ՀԹՊ, «Հայունիք», 1926, թ. 5, էջ 87:

վերա իրենց գեներալի մասին այսպիսի զրուցները, որ թոշում էին բերնե բերան», - անմիջապես ավելացնում է գերաշնորհ հայրը<sup>235</sup>: Սակայն այդ զինվորները կարիքը չունեին այդպիսի «զրուցներ» լսելու, քանի որ իրենց մի մասը ևս պարտադրաբար, ոմանք էլ՝ սիրահոժար կերպով, մասնակից է եղել այդ կողոպուտներին: Ընդ որում, զինվորները տնային իրերը կողոպտելուց հետո, սկսում էին հնձել հարուստ արտերը և թույլ շտալ, որ «ավելի սոված հայ զյուղացիությունը գեթ մասամբ օգտվեր ձրիաբար ձեռք անցած այդ հակայական հարստություննեն»<sup>236</sup>: Հուշագրողը դիպուկ նկատել է տալիս. «Հոգեբաննական այս դրության մեջ՝ հայ զինվորը ո՛չ ընդունակ էր կովկելու և ո՛չ ալ իր կացությանը մասին վճիռ գաղափար մը ունենալու»<sup>237</sup>: Կողոպուտի հարցում, «ըստ աստիճանների, հրամանատարական կազմը բաժանել էր իրար մեջ «ազգեցությունների գոնանները» և ամեն մեկը գծել էր իր տնտեսական իրավասության սահմանը», - նկատել է տալիս նահանգապետ Ղորղանյանը<sup>238</sup>:

Թալանել են նույնիսկ պետական պաշտոնյա, ՀՀ բանակի 0լթի մուտքից հետո այնտեղ գավառապետ նշանակված քուրդ էզո բեզի 800 գլուխ ոշխարի հոտը՝ նրա երկու հովիվներին սպանելով<sup>239</sup>: 1920 թ. ամառվա ընթացքում, Կարսից մինչև 0լթի տարածքի թուրքական և քրդական գյուղերում լքված ունեցվածքը պետականացնելու Կարսի նահանգապետի առաջարկությունը երևան՝ հարուցում է կողոպուտով հղիացած բարձրաստիճան հրամանատարների թշնամանքը: Մի խոսքով՝ տի-

<sup>235</sup> Գարեգին արք. Հովսեփյանց, «Կյանքիս ամենադժբախտ օրը և երջանկությանս բռպեն», «Ոգուն շապավինելու արդյունքը», էջ 35: Գարեգին արքի ալս վկայությունը հաստատում են նաև Կարս Սասունին և Վահե Արծրունին. տե՛ս ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թ. 6, էջ 87-88; Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 30: Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանի հուշերում տասնյակներով վկայություններ կան գեներալների ու գնդապետների, մասնավորաբար Հովսեփյանի թալանների մասին:

<sup>236</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 199:

<sup>237</sup> Նույն տեղում:

<sup>238</sup> ՀԱԱ, գ. 477, գ. 1, գ. 7, մաս 2, թ. 272:

<sup>239</sup> Նույն տեղում, թթ. 265, 269-271:

րել է «մեր դեմ խաղ չկա» սկզբունքը՝ հիմնովին ոտնատակ տալով օրինականությունն ու առհասարակ պետականության գաղափարը:

Աղան-թալանին մեծ ակտիվություն է ցուցաբերել առաջին գնդի հրամանատար, գնդապետ Հովհաննես Մազմանյանը: Փաջ և հայրենասեր սպայի համբավի տիրացած այս զինվորականը եղել է գեներալ Արտյոմ Հովհաննի աջ բազուկը թալանի գործում<sup>240</sup> և հօգուտ նրան ու սեփական անձին կատարում էր սպային ոչ վայել գործեր: Այդ հարցում նրան մեծապես օգնում էին, այսպես կոչված, «կամավորները» ձիավոր մատզերիստները<sup>241</sup>:

Ամենաթողությունն ու սանձարձակությունը հասել էին ամենավառ երևակայությունից անդին: Օրինակ, «Երբ Կարսի նահանգում, զինվորական զրահի տակ, սկսվեց հոչակավոր թալանը»<sup>242</sup>, գեներալ Փիրումյանի և «Աստղերի պալատի»<sup>243</sup> մի անդամի միջև տեղի է ունենում հետևյալ հեռախոսազրուցքը. «Ն ջան, ասում է գեն. Փիրումով, քեզ շատ եմ կարոտել, ել՛յրբ ես գալու Կարս, թալանի քո բաժինը պահել եմ...»: Ղորդանյանը հայտնում է, որ եթե նույնիսկ դա կատակ էր, ապա գոնք պետք չէ արվեր «հրապարակավ, երևանի և Կարսի հեռագրատան բազմաթիվ պաշտոնյաների ներկայությամբ», որի հետևանքով այս խոսակցությունը «մի ժամկից հետո բերանից բերան էր անցնում թե՝ Կարսում և թե՝ Երևանում...»<sup>244</sup>:

Թալանում էին ոչ միայն մուսուլմանների ունեցվածքն ու պետական հարստությունը, այլև, զինվորական կարիքների պիտակի տակ, բարձրաստիճան սպաները կողոպտում էին Կարսի ամրություններում:

<sup>240</sup> ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 6, թ. 34; Արտաշես Բաբալյան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 59, 62:

<sup>241</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 59:

<sup>242</sup> Թալանն սկսվել է անզլիացիների կողմից Կարսի նահանգում իշխանությունը հայկական պետությանը փոխանցելուց անմիջապես հետո՝ 1919 թ. մայիսի երկրորդ կեսին:

<sup>243</sup> Տես թիվ 209 ծանոթագրությունը:

<sup>244</sup> ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 10, թթ. 39-40:

ցարական կառավարության կուտակած հակայաքանակ գույքը<sup>245</sup>: Թալանն այնպիսի տարողություն էր ստացել, որ Կարսի անկումից մի շաբաթ առաջ, երբ որոշում են կարգի բերել բերդի ամրությունները, պարզվում է, որ նրանք գուրկ են էլեկտրականությունից ու ջրից, հեռախոսային և հեռագրական սարքերից, հետևաբար նաև կապից թե՛ միմյանց, թե՛ բերդի շտաբի ու հրետանու հրամանատարի հետ<sup>246</sup>: Գողացել էին նաև ավտոմեքենաները և թիֆլիս տանելով՝ վաճառել<sup>247</sup>:

Կողոպուտներին մասնակից զինվորականները մնում էին անպատճիժ: Երբ թալանն ահոելի չափեր է ընդունում ու հետաքննությամբ հաստատվում, նազարբեգյանը խստորեն հրամայում է վերջ տալ դրան, բայց ոք չէր ենթարկվում սպարապետի հրամանին: Որևէ ազգեցություն չի գործում նույնիսկ Փիրումյանին դատի տալու նազարբեգյանի սպառնալիքը: Ավելին, Փիրումյանը դրանից հետո ստանում է ավագ գորավարի (գեներալ-լեյտենանտ) աստիճան...<sup>248</sup>

Թալանի հարցում գեներալներին ու գնդապետներին մեծ օժանդակություն են մատուցել մասունքիստներն ու նրանց խմբապետները, որոնք Հայրենիքի պաշտպան «կամավորականների» պիտակի տակ հայտնվել էին Կարսի մարզում ու կցվել այս կամ այն սպային. «Գրեթե ամեն մի սպա ուներ իր ... «խոռմբը»»<sup>249</sup>: Նրանք քրաղվել են ոչ միայն թալանով, այլև՝ բռնաբարություններով և սպանություններով: Կողոպուտի հերթական արշավից վերադառնալով Կարս, նրանք «հուրանոցներում վատնում էին շատ մեծ գումարներ, հուրասիրելով գեներալներին», ովքեր «այդ զեխության ընդմիջումներում թուղթ խաղալով, տանում և տարվում էին միլիոններ...»<sup>250</sup>: Այս հրոսակախմբերը մեծապես նպաստել են նաև կանոնավոր զորքի մեջ ան-

<sup>245</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 1, թ. 50:

<sup>246</sup> Նույն տեղում, թ. 51: Տես նաև նույնը, մաս 3, թ. 365:

<sup>247</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 1, թ. 61: Տես նաև նույնը, մաս 3, թ. 364:

<sup>248</sup> Նույն տեղում, մաս 2, թթ. 243-244, 251:

<sup>249</sup> Նույն տեղում, թ. 262:

<sup>250</sup> Նույն տեղում, թ. 283:

կարգապահության տարածմանը: Նրանք եղել են ճակատից փախչողների առաջին շարքում<sup>251</sup>: Խմբապետներ Փիլոսի և Մուրադիսանի տղերքը չէին խորշում պատերազմի օրերին իսկ կողոպտելու Կարսի իրենց ազգակիցների բնակարանները<sup>252</sup>: Կողոպտով զբաղվել են Սմբատի՝ հարաբերաբար չվարկաբեկված ձիավոր կամավորներն անգամ<sup>253</sup>:

Մի խոսքով, թալանի մոլուցքով վարակվել են շատ շատերը՝ զորահրամանատար, սպա, զինվոր, կամավոր, պետական պաշտոնյա, պարզ քաղաքացի, «նույնիսկ կեղունի համազգային պատասխանատվություն ունեցողներեն որոշ թվով անձեր»<sup>254</sup>: Նրանք «միսրճվեցան թալանի, կողոպտողի և բռնաբարության տիղմին մեջ և ալ անկարող եղան դուրս գալ անկե, մինչև որ հայկական անկախությունն ալ իրենց հետ ցեխին հատակը տարան»<sup>255</sup>:

Թալանում էին ոչ միայն բնակչությանը, այլև՝ օտարերկրացիների և պետական հաստատությունները<sup>256</sup>, նույնիսկ՝ ... մեկը մյուսին. «Գողը գողեն կղողանար և Աստված ինք երկնքին մեջ կղարմանար»<sup>257</sup>, - հառաշում է հուշագրողը: Թալանի «հոգեբանությունը կարճ ժամանակեն ստացած էր տեսակ մը բնական երկութ»<sup>258</sup>: Հուշագրողը «թալանի ան-

<sup>251</sup> Արտաշես Բարյալյան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 62:

<sup>252</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 131-132:

<sup>253</sup> Նույն տեղում, էջ 154: Խազմական գոտում մասունքիստների անօրինականությունների մասին հավելվար տե՛ս Անանուն, «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը», էջ 31, 83; Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 31, 124, 156:

<sup>254</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 152, տե՛ս նաև, էջ 29, 256:

<sup>255</sup> Նույն տեղում, էջ 73:

<sup>256</sup> Օրինակ՝ Ալեքսանդրապոլից նահանջելիս հայոց բանակի զինվորները, այլոց շաբրում, կողոպտել էին «Սագօ» բնկերության և Փինանսական նախարարության շենքերը: Սա կողոպուտ էր, քանի որ կատարվել է ոչ թե բարիքները, պետական գույքին ու փաստաթղթերը թշնամուն շթողներու նպատակով, այլ խառնակությունից օգտվելով, դրանք սեփականացնելու մոլուցքով:

<sup>257</sup> Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 256:

<sup>258</sup> Նույն տեղում, էջ 29:

գուսապ «հակումը» համարում է «Կարսի ճակատի ձախորդությանց խոշորագույն դրդապատճառներն մեկը»<sup>259</sup>, մի գնահատական, որի հետ լիովին համաձայն ենք, այն հավելումով, որ թալանը հիմնական դեր խաղաց զորքի և հասարակության բարոյական անկման է՝ ավելի խորացման մեջ: «Ալլասերվել էր հասարակական մինոլորտը և մարդիկ բթացել էին ոչ միայն դեպի պետական, հասարակական պատիվը, այլև դեպի իրանց անձնական պատվասիրությունը», «խախտվել էին տարրական հասկացողությունները, մարդկանց մեջ բթացել էր պարտաճանաչության զգացմունքը»<sup>260</sup>, - դիպուկ նկատել է տալիս Ստ. Ղորդանյանը: Իսկ մարդկացին հասարակության մեջ որևէ նյութական կործանմանը նախորդում է բարոյական կործանումը:

#### Գ. 6. Յայրենիքի ազատագրված տարածքների նկատմամբ բարբարոսական վերաբերմունքը

Հայրենիքը սրբություն է, հայության բոլոր սերունդների համայնական սեփականությունը: Հետևաբար նրա հետ պետք է վերաբերվել երկուողածությամբ, իսկ նրա ազատագրված տարածքների հետ՝ առանձնահատուկ սիրով: Այս սկզբունքը ոչ միայն շհարգվեց Կարսի նահանգում և 1920 թ. ամառը ՀՀ բանակի 0լթիի շրջանի ազատագրած տարածքներում, այլ, ընդհակառակը, դրանց հետ վերաբերվեցին որպես թշնամու տարածքի՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով: «Կարսի նահանգը լցվեց բախտախնդիրներով միայն, պատահական մարդկանցով, որոնք շտապում էին միայն կեղեքել և փախչել»<sup>261</sup>: Այս տարածքներում զինվորականներն ու խմբապետների մատուցերիստ տղերքը քարեցին «այրած երկրի» քաղաքականություն: Կողոպուտը, բռնաբարությունները, սպանությունները և ամեն տեսակ վայրենությունները չափ ու սահման չունեին և դրանորվում էին իրենց ողջ տգեղությամբ: Բավա-

<sup>259</sup> Նույն տեղում, էջ 152: Տես նաև նույնը, էջ 29, 255-256:

<sup>260</sup> ՀԱԱ, ֆ. 477, գ. 1, գ. 7, մաս 1, թթ. 57-58:

<sup>261</sup> Նույն տեղում, թթ. 145-146:

րար է ասել, որ ընդամենը երկու ամսվա ընթացքում Կարսի նահանգապետն արձանագրել է գինվորականների գործած 75 ոճիր<sup>262</sup>:

Նկատի ունենալով ամբողջ վերոշարադրյալն ու հետևյալ փաստերը.

1. Գեներալ-մայոր Արտյոմ Հովսեփյանն ու գնդապետ Դմիտրի Միրիմանյանը բոլշևիկների կողմից ոչ միայն մյազան շաքսորվեցին 1921 թ. հունվարին, ՀՀ սպայության կազմում, այլ՝ նույն թվականի փետրվարին իրենց ծառայությունները մատուցին Կարմիր բանակի դեպի Լոռի, Թիֆլիս ու ապատամբած Երևան արշավանքների ժամանակ, որի համար էլ նրանք շքանշանների արժանացան (համաձայն ենք Ստ. Ղորղանյանի հետ, թե «ավելի ցայտուն դավաճանություն և ավելի այլանդակ հոգեբանական տեսիլ չի կարող ստեղծել ամենավառ երևակայությունը անգամ»<sup>263</sup>).

2. Երկուսն էլ դրանից հետո էլ շարունակեցին ծառայել Կարմիր բանակին (Միրիմանյանն արժանացավ գեներալական ուսադիրների).

3. Գեներալներ Փիրումյանը և Հովսեփյանը 1920 թ. մայիսի բոլշևիկյան խոռվության օրերին անցել էին խոռվարարների կողմը՝ «չեզոքության» պիտակի տակ.

4. Ստեփան Ղորղանյանի այն վկայությունը, թե Կարսի բոլոր գրավումների ժամանակ մեծ դեր է խաղացել կաշառքի դիմաց քաղաքի հանձնումը՝ պաշտպանական ձեական կոիվներից հետո (այս առումով հիշեցնենք, որ 1918 թ. ապրիլի 12-ի հետօրին, Սեյմի դեկավար Զիենկելու հրահանգով, գեներալ Նազարբեգյանի հրամանատարած Հայկական կորպուսը համարյա առանց դիմադրության քաղաքը թողել էր թուրքերին)<sup>264</sup>, հակված ենք վարկածի կարգով ենթադրելու, որ Կարս բերդաքաղաքի 1920 թ. հոկտեմբեր 30-ի հանձնումը ևս կատարվել է ՀՀ բանակի դեկավարության մի մասի՝ կոնկրետ՝ ուազմաճակատի կարևորագույն

<sup>262</sup> Նույն տեղում, գ. 7, մաս 2, թ. 285: Այդ ոճիրների մասին հավելյալ տե՛ս նույնը, մաս 3, թթ. 329-333:

<sup>263</sup> Նույն տեղում, գ. 18, թ. 38:

<sup>264</sup> Տես նաև ՀԱԱ, գ. 477, գ. 1, գ. 7, մաս 3, թ. 416:

Հատվածների հրամանատարներ Հովսեփյանի ու Միրիմանյանի դավաճանության հետևանքով<sup>265</sup>:

Ամփոփելով, մի անգամ ևս հաստատում ենք, որ ուզմական և մասավանդ բարոյահոգեբանական այսպիսի բազմաթիվ սխալների թեկուղ մի մասը բավարար կլիներ կործանման տանելու հայկական Կարսն ու Հայաստանի Հանրապետությունը: Նման որակներով պարտությունը անխուսափելի պիտի լիներ, իսկ հաղթությունը՝ ամեն տեսակ օրինաշափությունների կոպիտ և անտրամաբանական խախտում<sup>266</sup>:

<sup>265</sup> Կարմիր բանակի գեներալի ուսադիր ստացած Դմիտրի Միրիմանյանը, 1919 թ. մարտից մինչև 1920 թ. մայիսը՝ ՀՀ ուզմական նախարար, ՀՀ բանակի, ապա Կարմիր բանակի գեներալ Քրիստափոր Արարատյանը և բոլցկիկներին ծառայել մերժած գեներալ Մովսես Սիլիկյանը 1937-ին հայտարարվեցին «ժողովրդի թշնամի» և մի քանի այլ սպաների հետ նույն թվականի գեկտեմբերի 10-ին գնդակա՞րպվեցին նորքի ձորում. տե՛ս Գայկ Արքայան, Տրսում ու որակագործությունը գեներալ Մարտիրոս Սահակյանի աշխարհագործությունը՝ առաջնային գործառքով (այդ գեպքերի ականատեսի հուշերը տե՛ս Գևորգի Բաղդասարյան, «Դիմակայություն», Երևան, 1998, էջ 144-151):

<sup>266</sup> Համանման բարոյահոգեբանական անկման պատճառով հունական բանակը խայտառակ պարտություն կրեց թուրքերից՝ 1922 թ. և Կարսը թուրքերը կրկնեցին իզմիրում՝ 1922 թ. սեպտեմբերին: Այս զուգահեռը գիտուկ նկատել է Բեյրութի «Նայիրի» շաբաթաթերթի Խմբագիր, արձակագիր Անդրանիկ Շառուկյանը: Թերթի ժետարակ (1968-, Գ. 3.) 45-50 միացյալ համարների փոխարեն լուս տեսած բացառիկ համարում, նա վերահրատարակել է Կարսի անկման մասին Արտաշես Բարձրականի և Գարեգին արք. Հովսեփյանցի հուշագրությունները (համապատասխանաբար՝ էջ 8-14 և 15-19)՝ յուրաքանչյուրին կցելով խմբագրական ընդարձակ խոսքեր: Այնուհետև տպագրել է Մարտիրոս Սարյանի (շշփել աշխարհահուշակ գեղանկարչի հետ, - Գ. 3.) «Իզմիրի աղետը» հուշագրությունը (էջ 20-27): Հուշագրողը նշում է, որ հունական բանակը թուրքերի գիմաց ժամանակն անցկացնում էր անգործությամբ, խաղուպարով, երաժշտությամբ, հարբեցողությամբ և այլ զվարճություններով (նա մոռացել է կամ չի ցանկացել նշել թալանն ու բռնաբարություննե-

Կարսի 1920 թ. խայտառակ պարտության ու դրան հետևած Հայաստանի առաջին հանրապետության կործանման բազմաթերթ պատճառները ներկայացնելուց ու վերլուծելուց հետո հանգում ենք հետևյալ եղրակացություններին.

1. Կարսում ընդհանրապես հայության ու մասնավորապես Հայոց բանակի պարտությունը օրինաչափ էր և անխուսափելի<sup>267</sup>: Բանակներն ու ժողովուրդները համեմատվում են իրենց ոգեկան-գաղափարական որակներով ու դրանցից բխող բարոյահոգեբանական հատկանիշներով: Բանակի մարտունակությունը որոշվում է ո՞չ բանակի թվակազմով, ո՞չ մարտական պատրաստվածությամբ (զինտեխնիկային տիրապետելով), ո՞չ էլ մարտական տեխնիկայի արդիականությամբ ու հագեցվածության աստիճանով: Այդ բոլորը անհրաժեշտ են, բայց ո՞չ բավարար: Բանակը, նախ և առաջ, ոգի է, մարտական ոգի, որը սնվում է ազգի ոգուց: Եթե ոգին չկամ թուղլ է՝ պարտությունները հնարավոր կամ նույնիսկ անխուսափելի են դառնում: Ոգեկան-գաղափարական, բարոյական և հոգևոր անկումն անպայմանորեն և անխուսափելիորեն առաջնորդում է ֆիզիկական (նյութական) անկման:

2. Ազգի և ազգային պետության պահպանման ու հզորացման հովաք պես է դնել միայն և միայն ազգի սեփական կարողությունների վրա՝ դրանք մոբիլիզացնելով ու շաղախելով վեհ գաղափարներով և ղեկավարների անձնական դրական օրինակներով:

Սույն հոգվածով մենք փորձեցինք ներկայացնել ու վերլուծել Կարսի և Հայաստանի առաջին հանրապետության անկումները՝ գաղափար-

բը,- Գ. 3), ապա գրում. «Խսկապես ողբերգական էր հույն բանակին և հույն ժողովուրդին վիճակը իզմիրի մեջ, և կարգ մը նմանության եզրեր ուներ մեր Կարսի ու Արգահանի բանակին, Հայաստանի և հայ ժողովուրդի գառնադես պարտության սև ճակատագրին հետ» (էջ 27):

<sup>267</sup> Անդրանիկ Ծառուկյան, խմբագրական ներածական խոսք Արտաշես Բաբայանի «Կարսի անկումը» հուշագրության վերահրատարակման առթիվ, «Նայիրի», ԺԵ տարվա (1968,- Գ. 3.) 45-50 միացյալ համարների փոխարեն լույս տեսած բացառիկ համար, էջ 8:

բական, ուազմահոգեբանական, սոցիալ-հոգեբանական և այլ «ներքին» տեսանկյուններից: Այս «ներքին» պատճառների հետագա խորացված համալիր վերլուծումը հույժ կարեոր նշանակություն ունի հայ ժողովրդի և հայկական պետականության հետագա գոյատևման համար:

Կարսի ու Հայաստանի առաջին հանրապետության անկմանն ու կործանմանը նախորդած արատավոր երկութիներից շատերն այսօր էլ առկա են հայկական պետության և հասարակության կյանքում: Հետևաբար, նոր անկումն ու կործանումը կարող են դառնալ հավանական, եթե վայրկյան առաջ չձերբագավատվենք բացասական երկութիներից ու տրամագծորեն շըշենք իրավիճակը:

Կարսի անկման ականատես Արտաշես Բաբայանն իր հուշագրությունն ավարտում է ասելով. «Երանի թե այս դառն սխալները դաս ծառայեին ապագայի համար»<sup>268</sup>:

---

<sup>268</sup> Արտաշես Բաբայան. «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 68: